Կենդանու նկարագրությունը: Նշտարիկները աղահամ ջրային կենսակերպ վարող կենդանիներ են: Հայտնի է նրանց շուրջ 30-35 տեսակ: Նրանք ապրում են գերազանցապես Ատլանտյան, Խաղաղ և Հնդկական օվկիանոսի բարեխառն կամ տաք ծովերում, այդ թվում՝ Սև ծովում: Նրանցից շատերը, այդ թվում նվիրական նշտարիկը, իր կյանքի մեծ մասը անց է կացնում նշտարած և կամ նիզակած և պոչով և իրանով հատակի (բենթոս) ավազի կամ տիղմի մեջ խրված, գրեթե լրիվ անշարժ վիճակում, որի ժամանակ ջրի մեջ է լինում նրա միայն գլխային ծայրը՝ նախաքերանային բազմաձրք և դրա շուրջը դասավորված շոշափուկները: Տիղմի մեջ ապրող նշտարիկներն ընդունակ են նաև դանդաղորեն տեղաշարժել իրանը և պոչը այս կամ այն կողմի վրա ծռվելով, իսկ սակավ դեպքերում նրանք կարող են ինքնուրույն կամ ջրի ակնթափանքի հետևանքով դուրս գալ հատակի տիղմից կամ ավազից և կարճ ժամանակով դանդաղորեն լողալ մերձհատակային ջրում ու նորից անցնել անշարժ կենսակերպին: Օվկիանոսում կամ ծովում նրանք մեծ մասամբ ապրում են առափնյա շրջանում 10-30մ մինչև 1000մ խորությունում, որտեղ ջրիմաստիճանը հաճախ կազմում է 17-30° , աղիությունը 17-30‰, (1/1000), իսկ պլանկտոնային տեսակներն ապրում են մինչև 3000մ խորությունում:

Հայտնի է նշտարիկների կամ ամֆիքսիդների մեկ ընտանիք (Branchiostomidae, Amphioxidae), որում ներեմն տարբերում են 3 ենթաընտանիք՝ 1)նշտարիկներ (Branchiostoma, Amphioxus), 2)Էպիգոնիխոսներ (Epigonichthys), 3) ամֆիքսոսներ (Amphioxus): Որոշները սրանց դիտում են որպես ընտանիքներ:

Նշտարիկների կամ ամֆիքսոսների ենթաընտանիքում հայտնի է 20 տեսակ: Նրանց մարմնի երկարությունը կազմում է 6-8սմ, սնունդն գեղձերը մարմնի աջ և ձախ կողմում բաշխված են համաչափ, ստորին կողմնային ծայրը վերջանում է շուրջխոնկային անցքից (ատրիալ անցք) հետ: Էպիգոնիխոսների մարմնի երկարությունը հասնում է մինչև 5 սմ-ի: Նրանց

սննդանյութը գտնվում են մարմնի միայն աջ մասում: Այդ ստորին կողմնային ծալքն ավելի երկար է անցնում է ստորագային լողակին, իսկ ձախը վերջանում է տարիալ ծալքի հետին մասում: Հայտնի է նրանց 6 տեսակ: Նշտարիկ ամֆիոքստոսները ապրում են միայն պլանկտոնում: Նրանց բերանը գլխային ծայրում գտնվում է փոքի կողմում՝ միջին գծից քիչ դեպի ձախ: Բերանի շուրջը շոշափուկներ չկան, չունեն շուրջխթիկային խոռոչ, սննդանյութը գերգացած չեն: Առանձին տեսակների երկարությունը հասնում է մինչև 16 մմ:

Ելյապական նշտարիկի մարմնի երկարությունը հասնում է մինչև 8 սմ-ի: Նա ունի սպիտակավուն գույն, կողքերից սնդված, պռչի ծայրում մեջքափորային ուղղությամբ սրացած մարմին (նկ.1):



Նկ.1. Նշտարիկի արտաքին տեսքը և ներքին օրգանները


1-մախքաբերանային ձաղար, 2-շոշափուկներ, 3-մեջքային լողակ, 4-պոչային լողակ, 5-ներթափայլային լողակ, 6-ատրիոպոր, 7-մետապոկրալ ծայր, 8-հետևանցք, 9-միոմեր, 10-միոսմեզո, 11-թիկնալար 12-ներկային փող, 13-Հեսսի աչիկներ, 14-«կնետ աչք», 15-բերանի խոռոչ, 16-առագաստ/17-լուսյան, 18-խոցիկային ճեղք, 19-միջխոցիկային միջնապատ, 20-աղիք, 21-լարդային ելուն, 22-սննդանյութ գեղձ

Մարմնի առաջնային (գլխային) ծայրը փոքր ինչ լայնացած է: Այստեղ գտնվող նախաբերանային խոռոչի շուրջը դասավորված են 10-20 գույզ շոշափուկներ, որոնց թաթթումների շնորհիվ այդ կազմվածքի մեջ շարունակաբար սփվում է ջուր: և սննդային մասնիկներ: Նշտարիկի հատեր կեր են ծառայում դիատոմային ջրփուռները և այլ օրգանական մասնիկներ: Նշտարիկի պռչի հետին ծայրը և լողակը, նշտարածն կամ նիզակածն նեղացած է, որից էլ նա առագել է իր նշտարիկ անվանումը: Մարմնի թիկնային կողմով ձգված է մեջքի ոչ բարձր լողակը, որը պռչի ստորին մասում առաջացնում է ներթափայլային լողակ: Տեղաշարժման (լողալու) ֆունկցիան իրականացվում է պռչի, իրանի մկանների, մեջքի ու պռչի լողակի միջոցով:

Մաշկը, կմախքը և մկանները: Նշտարիկի մաշկը (հիպոդերմ) կազմված է 2 շերտից: Արտաքին շերտում վերնամաշկը (էպիդերմիս) կազմված է միաշերտ էպիթելիային հյուսվածքից: Դեբ տակ ընկած է բարակապատ լորձոնքաշարակցական հյուսվածքից կազմված բուռ մաշկը (կուտիս, դերմա): Այստեղ տեղադրված լորձ արտադրող գեղձերը արտադրում են արտազատուկ, որն էլ պարունակում է ամբողջ մաշկին, կազմելով բարակ թաղանթ՝ կուտիկուլա: Վերջինս ունի պաշտպանական ու սահունություն տալու նշանակություն:

Նշտարիկի ներքին առանցքային կոմպլեքսին կմախքը՝ թիկնալարը կամ քորդան, պարուրված է լինում շարակցական հյուսվածքային առանձնական թաղանթի (պարայան) մեջ: Թիկնալարը գլխի հետին մասից ձգվում է մինչև պռչի ծայրը: Թիկնալարին պատկանող շարակցական հյուսվածքային պարայանից գոյացած հենարանային չորսուները և միջնորմները անցնում են մկանների տարանքով ու խոռոչների չորս կողմերը: Այդ պարայանը թիկնալարին տալիս է նաև անհրաժեշտ ամրություն և առանձնացություն:

Նշտարիկը ունի հատվածավոր (մետամեր) դասավորված մկանային համակարգ, որը կազմված է բազմաթիվ հատվածներից կամ միոմերներից: Վերջիններս իրարից բաժանված են շարակցական հյուսվածքային միջնապատներով՝ միոսմեզոներով: Միոմերները սկզբում մարմնի վերին մասից ուղղվում են դեպի ցած, մոտավորապես իրանի միջնամասում կազմում են անկյուն, ապա ուղղվում են դեպի հետ (նկ.1):



Նկ. 2. Նշտարիկի միջածից կտրվածքը ընկանի հատվածից 1-մեջքի լողակ, 2- մետապլերալ ծայր, 3- էպիդերմիս, 4-բուն մաշկ, 5-քորզա, 6-նյարդային փող, 7- ճնախ աչիկներ, 8-քորդային յորձային թաղանթ, 9- միոսեպտա, 10- միոմեր, 11- ըմպանի խոռոչ, 12- խիկային ճեղք, 13- միջխիկային միջնապատ, 14- էնդոստի, 15-վերխիկային ակոս, 16-լարդային երուն, 17- սնունկան գեղձեր, 18-ատրիալ խոռոչ, 19-լայնակի մկաններ:




Նկ. 3. Նշտարիկի միջածից կտրվածքը աղիքի հատվածից 1- մեջքի լողակ, 2- ենթապոչային լողակ, 3- էպիդերմիս 4- կոտիս, 5-քորզա, 6- ներկային փող /նվիրոցն/, 7- ճնախ աչիկներ, 8-քորդային պատող թաղանթ 9-միոսեպտ, 10- միոմեր, 11-աղիքի պատ, 12-աղիքի խոռոչ, 13-ցեղումային խոռոչ:

Մարսողական և շնչառական համակարգը: Մարսողական և շնչառական համակարգերը սերտորեն կապված են իրար հետ: Ջուրը և դրա մեջ գտնվող կերը մարսողական ուղու սկզբնաձև նախաբերանային խոռոչի մեջ մղվում է վերջինիս շուրջը դաստավորված թարթիչների թարթումների միջոցով (նկ.1): Նախաբերանային խոռոչը կլանից բաժանված է շրջանաձև թաղանթով՝ առագաստով: Վերջինս բազմվուց այստեղ մղված ջուրը անցնում է կլանի մեջ: Ընդարձակ և երկար կլանը հասնում է մինչև կենդանու մարմնի միջնամասը: Դրա պատերին կա մինչև 150 գույգ խիկային ճեղքեր: Վերջիններիս պատերին կան այդան բազմաթիվ անոթներ, որոնց հետ ջուրը շփվելիս արյունից կլանում է թթվածին և տալիս՝ ածխաթթու(արյունը օքսիդանում է): Կլանից խիկային ճեղքերով դուրս մղվող ջուրն անցնում է նախ նրան շրջապատող շուրջխիկային խոռոչի՝ ատրիալ խոռոչի մեջ, ապա վերջինիս վրա գտնվող պարիերի անոթների սեղմիչները թուլանալուց՝ անոթերը բացվելուց դուրս է մղվում արտաքին աշխարհ: Մինչ այդ կլանի հատակին գտնվող յուրահատուկ ակոսի (էնդոստի) թարթիչավոր եպիթելի թիֆչները քրից վերցնում են կերային մասնիկները և դնալի հետ թարթման ճանապարհով գցում են աղիքի մեջ: Կերը այստեղ մարսվում է աղիքային հյուսթի և աղիքի սկզբնամասում բազմալ լարդային երունից հոսող լեղու ազդեցությամբ: Նշտարիկի մարսողական աղիք ունի ուղիղ ընթացք՝ մարմնի խոռոչում գալարներ չի առաջացնում: Նշտարիկը տարբերակված սկզբնաղի, միջնաղի և հետնաղի չունի: Հետնացքը բացվում է ենթապոչային լողակի սկզբնամասում, փողի միջին գծից քիչ ձախ դիրքում: Հետնացքից չմարսված կերային մնացորդները հեռացվում է արտաքին աշխարհ:

Արյունատար համակարգը: Նշտարիկը սիրտ չունի, սակայն ունի արյան մեկ ընդհանուր փակ շրջանառություն: Գլխավոր դերը արյան շրջանառության ֆունկցիայում պատկանում է փորային աթրոսային /նկ.4/, որը երակային արյուն պարանալոդ կծկուն անոթ է:

Դրանով մարմնի հետին ծայրից արյունը հոսում է դեպի առաջնային ծայրը: Կլանի հատվածում փողային աորտան իրենից անջատում է թագմաթիվ (խոիկային ճեղքների քանակին համապատասխան) խոիկային զարկերակներ, որոնք մտնում են խոիկային միջնապատերի մեջ: Դրանցում արյունը կատարում է զագափոխանակություն՝ տալիս է ածխաթթու և կլանում է թթվածին /օքսիդանում է/: Խոիկային միջնապատերից դուրս գալուց անոթները սկզբում առաջացնում են զույգ վերի խոիկային զարկերակներ, որոնք համարվում են մեջքային աորտայի արմատները: Դրանք իրար միանալով առաջացնում են զույգ քնային զարկերակներ: Դրանք զուտ զարկերակային արյուն են մատակարարում գլխի օրգաններին: Իսկ արյուն հիմնական մասը մեջքային աորտայի աջ և ձախ արմատներով ձգվելով դեպի հետ մոտավորապես մարմնի միջնամասում միաձուլվում են իրար ու առաջացնում են կենտ մեջքային անոթ՝ մեջքային աորտա: Վերջինս, թիկնալարի տակով ձգվելով դեպի մարմնի հետին ծայրը, իրենից անջատում է թագմաթիվ փոքր անոթներ, որոնցով արյուն է մատակարարում մինչև պոչի ծայրը ընկած բոլոր օրգաններին: Օրգաններում այդ անոթներն առաջացնում են մագանոթային ցանց, որոնցով նրանց մատակարարում են սննդանյութեր և թթվածին: Արյունքում արյունը հարստանում է ածխաթթու գազով և կուրսափոխանակության այլ արգասիքներով ու դառնում է զուտ երակային: Մարմնի առջևի ծայրից դեպի հետ հոսող երակային անոթները ի վերջո առաջացնում են մեկ զույգ անոթ՝ առջևի աջ և ձախ կարդինալ երակներ, որոնցով արյունը հոսում է դեպի հետ: Մարմնի հետին ծայրից դեպի առաջ հոսող երակները կազմում են հետին զույգ աջ և ձախ կարդինալ երակները, որոնցով արյունը հոսում է դեպի առաջ: Կլանից մի փոքր հետ, աջ և ձախ կողմի առջևի և հետին կարդինալ երակները միանում են իրար ու առաջացնում են աջ կուովերյան ծորանը, որն ուղղվում է զաժ: Նույն ձևով ձախ կողմի առջևի և հետին կարդինալ երակները միանալով իրար հետ՝ առաջացնում են ձախ կուովերյան ծորանը: Դրանից հետո երկու կուովերյան ծորանները թափվում են փորային աորտայի սկզբնաստի մեջ: Բացի այդ երակներից, նշտարիկի մարմնի հետին ծայրից սկսվում է պոչային երակը, որը փոչի կողմով ձգվում է դեպի առաջ և ընթացքում իր մեջ է ներառում անոթներից սկիզբ առնող երակային անոթները, որը և մինչև լյարդի ստեմանի հասնելը կոչվում է ենթաաղիքային երակ: Մտնելով լյարդի մեջ նա կրկին առաջացնում է երակային ցանցավորություն՝ /բուներակային համակարգ/: Լյարդից դուրս գալուց առաջ այդ անոթները կրկին իրար միանալով, առաջացնում են մեկ երակ՝ լյարդային երակ: Վերջինս, ընթանալով դեպի առաջ, դարձյալ թափվում է փորային աորտայի մեջ: Փորային աորտայի երակային արյունը մեջքային աորտայի արմատի հատվածում միավառնվում է զարկերակային արյանն ու դառնում է խառը բնույթի:




Նկ. 4. Նշտարիկի արյան շրջանառության սխեման

1-փորային աորտա, 2-խոիկային արտաքին երակներ, 3-խոիկային արտատար զարկերակներ, 4-մեջքային աորտայի արմատները, 5-քնային զարկերակներ, 6-մեջքային աորտա, 7-աղիքային զարկերակ, 8-ենթաաղիքային երակ, 9-լյարդի դոճներակ, 10-լյարդային երակ, 11-հետին աջ կարդինալ երակ, 12-առջևի աջ կարդինալ երակ, 13-աջ կուովերյան ծորան:

Նյարդային համակարգը և գգայարանները: Նշտարիկը կենտրոնական նյարդային համակարգ՝ գլխուղեղ և ողնուղեղ չունի: Նրա նյարդային համակարգը ներկայացված է թիկնաղբի փայտվ ձգվող նյարդային խողովակի՝ նմկրոցելի ձևով: Դրանից դուրս եկող նյարդաթելերով նյարդավորվում են մարմնի թուր մասերը և օրգանները:

Նշտարիկի գգայության օրգանները թույլ են զարգացած: Լուսազգացողյան օրգաններն են նմկրոցելի մեջ, գրեթե ամբողջ երկայնքով դասավորված, հաստակ մուգ գույնի գունափայտ պարունակող Վեսսի աշիկները: Մարմնի առաջնային ծայրում՝ հոտառական փոսի մեջ գտնվում է հոտառական գգայարանը: Գլխային ծայրում է գտնվում նաև նրա կարմրավուն գույնի պիգմենտ պարունակող «կենտ աշիկը» (յալ երևում է մանրադիտակի փոքր խոշորացման տակ): Մաշկային և թիմիական գգայության հաա ու կենտ քիջները հիմնականում կենտրոնացված են բերանի շուրջը դասավորված շոշափուկների վրա:

Արտաթորության և սեռական համակարգը: Արտաթորության համակարգը ներկայացված է մետամեր դասավորված 90-100 գույգ նմկրիդների ձևով: Դրանցից յուրաքանչյուրը կարճ խողովակ է, որը իր մանրադիտակային ծակուղիներ կրող ծայրով սկսվում է մարմնի երկարության խառնից (ցելում), իսկ մյուս ծայրով բացվում էլանի շրջանում՝ ասորիալ խառնում: Նմկրիդների անցքերը շրջապատված են գնդաձևաձև հատուկ քիջներով՝ սոլենոցիտներով, որոնք ունեն ներքին խողովակ և թաղթող մագիկներ(նկ 5):



Նկ. 5 Նշտարիկի արտաթորության խողովակների՝ սոլենոցիտների կազմությունը
Ա- արտաթորության նրբախողովակների մի մասը նրա վրա նստած սոլենոցիտներով,
Բ- նմկրոստումներով խողովակները, 1- գնդաձևաձև քիջները՝ սոլենոցիտները, 2- բազիլարը
մարմնի խառնում՝ ցելումում, 3-ասորիալ խառնի մեջ բացված անցքը թաղթիալոր քիջներով,
4-խիկային ճեղք

Նշտարիկը բաժանաանե կենդանի է: Նրա մոտ սեռական տարածկությունը (դիմորֆիզմ) բացակայում է: Օվալ ձևի սեռական գնդերը (ձվարաններ, սերմնարաններ), որոնց քանակը հասնում է 25 գույգի, գտնվում են կլանի հետին և աղիքի սկզբի հատվածում՝ մարմնապատի աջ և ձախ կեսում: Դրանք արտառող ծորաններ չունեն:

Գնդերում (սերմնարան, ձվարան) հատուկացած սպերմատոգոններն ու ձվաբջջները դրանց պատերը պատվելուց՝ ընկնում են նախ ասորիալ խառնի մեջ, ապա ջրի հետ խիկային ճեղքերով դուրս են բերվում արտաքին աշխարհ: Ատորիալ խառնում կամ ջրամբարում շարժունակությամբ օժտված սերմնաբջջները հանդիպում և քնովնավորում են ձվաբջջներին՝ առաջացնելով սաղմ՝ գիգատ: Նշտարիկի ձվերը փոքր են, դեղնաօղ աղբառ, որի համար սաղմի տրոհումը լինում է գրեթե իմպլաստացի: Զարգացող սաղմի բլասուլաները ստորին կողմում կամ վեցնտառով բեռնում, ի տարբերություն այլ թիկնալարավորների, միշտ լինում են որոշ խոշոր, քան վերին կամ անիմալ (սաղմնակիր) բեռնում: Սաղմնային զարգացման սկզբնական փուլերը՝ սաղմի տրոհումը, բլասուլայի և գաստրուլայի շրջանները, երկրորդային բերանի առաջացումը շատ կողմերով նման է մյուս թիկնալարավորների, այդ թվում՝ նույնիսկ բարձրակարգ թիկնալարավորների սաղմների

գարգազմանը: Սաղմի տրամաչափը կազմում է 0,1մմ: Սաղմի տրոհումը ընթանում է լրիվ հավասարաձև թլաստումներով առաջացմամբ: 5-8 ժամ հետո գնդաձև բջջակազմվածքով սաղմը անցնում է գաստրուլայի շրջանին (արտաքին շերտից բջիջները իրենց վրա շրջվելով դառնում են երկշերտանի): Դրանից 12-24 ժ հետո սաղմը դառնում է եռշերտանի (արտաքին և ներքին շերտերի միջև առաջանում է մեզոդերմը): Դրան հաջորդում է օրգանների և մասերի գոյացումը և շուրջ 24 ժամից ձվաթաղանթը պայթում է ու առաջանում է շուրջ 3 մմ երկարություն ունեցող թրթուր, որը իրեն պատած թարթիչներով կտրողանում է ինքնուրույն լողալ: 30-36 ժամ հետո թրթուրի մոտ առաջանում է մարսողական խողովակը, խոիկային ճեղքերը և մյուս օրգանները: Թրթուրային շրջանը տևում է շուրջ 3 ամիս: Ամբողջ այդ ընթացքում նա վարում է լողացող կենսակերպ՝ օգտագործելով թարթիչները և պոչը: Այդ շրջանում նա վարում է գիշատչային կյանք՝ ակտիվ ձևով որսում և սնվում է դիատոմային ջրիմուռներով, փաթր խնկցետնակներով և օրգանական տարրեր մնացորդներով: Կյանքի առաջին տարվա վերջին թրթուրը դառնում է չափահաս, որը ունենում է շուրջ 3 մմ մեծություն: Այդ շրջանից հետո նա անցնում է հատակի տիղմի մեջ խրված պասիվ սննդառության եղանակին: 2 տարեկանում նա ունենում է 2 սմ, 3 տարեկանում՝ 5-6սմ, 4 տարեկանում՝ 7-8սմ մեծություն: Սևահասուն է դառնում է 2-3 տարեկան հասակում:

Մարմնի խոռոչ: Բոլոր թիկնավարավորների նման նշտարիկը ունի մարմնի երկրորդնային խոռոչ՝ ցեղում: Կլանի հատվածում ատրիալ խոռոչի մեծ զարգացման կապակցությամբ դա այդտեղ թույլ է արտահայտված, պահպանված է միայն կլանի վերին կողմնային մասում՝ ներկայացված է ատրիալ խոռոչի ձևով, որը հետ սղելով ցեղմը նրան վեր է ածում երկու նեղ խողովակի՝ վերկլանային և ենթաաղիքային խողովակի: Դրան հակառակ, աղիքի միջնամասի և հետնամասի շրջանում ցեղմը լավ է արտահայտված՝ հանդես է գալիս որպես աղիքը շրջապատող խոռոչ:

Ամփոփում

Աշխատանքում տեղեկություններ է բերվում նշտարիկի դասակարգման, կազմության, կենսակերպի, ինչպես և այդ թեմայի լաբորատոր-գործնական աշխատանքի անցկացման մասին, որոնք, մեր կարծիքով, կարող են օգտակար լինել ուսանողների, մագիստրոսների, կենսաբանության ուսուցիչների և դասավիտսների համար:

Резюме

В работе приводятся данные о классификации, строении и образе жизни ланцетника. Кроме того, даются формы и методы организации и проведения лабораторно-практической работы по теме- ланцетник. Эти данные, на наш взгляд, могут быть полезны для студентов, магистрантов, и начинающих преподавателей биологии средних школ и ВУЗ-ов.

Գրականություն

1. Н.Н.Карташев, В.Е.Соколов, И.А.Шиялов, Практикум по зоологии позвоночных, Москва, 1969, ст.10-16.
2. Жизнь животных (под ред. Т.С.Пасса), Москва, 1993, том 4, ст.9-11.
3. С.П.Наумов, Зоология позвоночных, Москва, ст. 13-19.
4. Պ.Ը.Հոֆման, Կադդոնիկո և ուրիշներ, Ընդամուր բիոլոգիայի գործնական պարապմունքների ձեռնարկ, Երևան, 1963, էջ 224-231:

ՎԱՐՔԻ ԱՐՄԱՏՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀՈԴՈՒՄ ԵՎ ՏՆԵՐՎԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍԻ ԱՃԸ ԿԱՆՎԱՍԽՈՒՄԱԿԱՆ ԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ե. Հակոբյան
Կենսաբանության ամբիոն

Վազի սաղարթի և արմատային համակարգի միջև որոշակի հարաբերակցական կապ կա: Որքան լավ է զարգացած վազի սաղարթը, այնքան հզոր է նրա արմատային համակարգը: Վազի արմատները լավ են զարգանում ստորգետնյա բնի այն կողմում, որտեղ լավ է զարգանում սաղարթը: Դա լավ է նկատվում հատկապես նրիտատարը վազի վրա: Արմատների կողմից քրի կլանումը բարդ գործընթաց է, որին մասնակցում են հիմնականում արմատամազիկները: Ձրի անընդհատ փոխադրումը դեպի տերևները ենթարկվողություն է ստեղծում, որ իրականանա ամենավերջին գործընթացներից մեկը՝ ֆոտոսինթեզը:

Խաղողի վազը յուստսեր թույս է, վատ լուսավորության պայմաններում ընկնում է տերևների ապիմիլյացիայի արդյունավետությունը, որի հետևանքով քիչ քանակությամբ օրգանական նյութեր են սինթեզվում: Թույլ սննդատության պայմաններում վատանում է շիվերի հասունացման, ծաղային բողբոջներում ծաղկաբույլերի սաղմնային զարգացման, պտուղներում շաքարի կուտակման և թույսին խիտ անհրաժեշտ այլ գործընթացները:

Այգու հաճախակի ոռոգումը նպաստում է բարակ արմատների մոտեցմանը հողի մակերեսին, որը բացասական երևույթ է:

Հզոր և եռողիվ խոր տարածված արմատային համակարգը ժամանակին ապահովվելով վերգետնյա օրգաններից ջրով և հանքային սննդանյութերով բարձրացնում է վազերի աճը և բերքատվությունը:

Մեծ է տերևային մակերեսի դերը վազի կյանքում: Հանդիսանալով օրգանական նյութերի սինթեզող, սրանք նպաստում են թույսի աճին, շիվերի հասունացմանը, ծաղկաբույլերի սաղմնային զարգացմանը: Ըստ գրականության տնտեսական (Ջախարովա Ե.Բ., 1953, Ստոև Կ.Դ., 1971, Հակոբյան Գ.Ա., 1969) յուրաքանչյուր 1կգ խաղողի համար վազը պետք է ունենա ոչ պակաս, քան 1.2մ² տերևային մակերես: Դրանից քիչ լինելու դեպքում խաղողն ունենում է զածր որակ:

Ուսումնասիրությունները կատարվել են ԱրԴՀ ուսումնա-փորձնական հողամասում, որը գտնվում է «Գետափ» տեղամասում: Տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից 750մ: Այգու տարածքը 1հա է, վազերը տնկված են 3x2 մ սխևմաով: Վազի տարիքը՝ 3 տարեկան:

Տնկված են «Կարդինալ», «Ռաժնիթնի», «Մնոգոդնի» և այլ խաղողի սորտեր:

Հետազոտությունները կատարվել են 15 վազերի վրա /3 կրկնություն/:

Ուսումնասիրվել է վազերի տերևային մակերեսը ըստ ամիսների և արմատային համակարգի տարածումը հողի մեջ՝ կախված խոնավությունից: Վազի տերևային մակերեսը որոշվել է պրոք. Ա.Ա. Մելնիկի ամպլեոգրաֆիական մեթոդով: Արմատային համակարգի տարածումը հողում ուսումնասիրվել է «կտրվածքի» մեթոդով՝ ըստ Վ.Ա. Կոլեսնիկովի:

Վազի տերևային մակերեսի աճը կախված խոնավությունից ընթացել է ենտկյալ կերպ (աղյուսակ 1)

Աղյուսակ 1

Տերևային մակերեսի կախվածությունը հողի խոնավությունից (2005թ.)

Աղյուսակի բնույթը	Հաշվառման օրերը					
	25 / VI	25 / VII	5 / VIII	25 / VIII	30 / VIII	25 / IX
Հողի խոնավությունը (%-ով)	21.5	18.3	16.4	14.3	13.4	12.4
Տերևային մակերեսը մեկ վազի վրա (մ ²)	16.2	18.4	13.5	9.4	6.8	5.2

Հողի խոնավությունը վազերի աչքերի բազմակուց մինչև ծաղկման վերջը գտնվում էր դաշտային խոնավության սահմաններում, որը մոտեցելի էր թույսին: Տերևային մակերեսը մեկ

վազի վրա հունիսի 25-ի տվյալներով կազմել է 16.2 մ²: Հունիսի 10-ին կարկուտի հետևանքով խաղողի վազերը խիստ տուժվել են: Վնասվել է տերևային մակերևույթը, կոտրվել են շիվերը: Կտրածվել են այն մատները, որոնց շիվերը կոտրվել են, թողնելով հիմքի 2-3 հաճագույցները՝ տնրկներով: Խոր ծերատնելով շիվերը նպաստում ենք բժաշկվելի, քազվառլա ճյուղերի, քնած բույրացներից, մատների հիմքի այքներից առաջացած շիվերի արդյունավետ աճելուն: Դրանով ապահովում ենք վազը առիվիլյացիոն մակերևույթով, որը կնպաստի տնկարկների հաջորդ տարվա բերքատվությանը:

Հուլիսին հողի խոնավությունը քիչ նվազել է, սակայն այն դեռևս մատչելի էր վազին:

Օգոստոսի սկզբներին հողի խոնավությունը իջել է մոտենալով մագաղաթային կապի խզման ստորին սահմանին: Հողի խոնավությունը դարձել է վազի համար դժվար մատչելի: Արդյունքում վազի տերևային մակերևույթը կրճատվել է: Օգոստոսի վերջին հողի խոնավությունը մոտենցել է վազի թառամման գործակցին և այն դարձել է դժվար մատչելի: Վազն իր գոյությունը պահելու համար սկսել են չորանալ շիվերի հիմքին մոտիկ գտնվող ծեր տերևները: Արդյունքում վազի տերևային մակերևույթը խիստ կրճատվել է:


Այսպիսով՝ հողի խոնավության պակասը խիստ կրճատել է վազի տերևային մակերևույթը:

Վազի արմատային համակարգի տարածումը հողում ուսումնասիրել ենք «կտրվածքի» եղանակով: Հոկտեմբերի վերջին, երբ ավարտվել է վազի վերգնդայա օրգանների աճը, գգուշությամբ հողը փորվել է և կատարվել կտրվածք՝ 2մ խորությամբ և 1մ լայնությամբ: Փորձի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում և նկար 1-ում: Ուսումնասիրություններից ստացել ենք, որ վազի արմատների հիմնական մասը՝ 83% գտնվում են AB և B հորիզոնները, այսինքն 20-90 սմ խորությունը: Ընդ որում կմայքային և կիսակմայքային արմատները այդ հորիզոններում կազմել են շատ չնչին մասը՝ 13 հատ, մինչդեռ մեկ մմ-ից քիչ տրամագիծ ունեցող արմատների քանակը բավականին շատ էր՝ 35 հատ:

Աղյուսակ 2

Արմատային համակարգի կտրվածքի քանակը և պայմանական նշանները

Հողի գենետիկական հորիզոնի խորությունը (սմ)	Պայմանական նշանները և տրամագծերը (մմ)				Ընդամենը
	● > 8	⊙ 3-8	○ 1-3	• < 1	
AB - 0 - 60	2	2	3	18	25
B - 60 - 90	-	2	4	17	23
BC - 90 - 120	-	1	1	8	10
Ընդամենը	2	5	8	43	58



Արմատների տրամագիծը (մմ)

Ընդամենը 58 կտրվածք

Նկ. 1. Վազի արմատային համակարգի տարածումը հողում կտրված խոնավությունից

Այսպիսով, վազերի արմատների շուրջ 83% տարածվել են AB և B հորիզոններում: Սակայն խոնավության պակասի հետ կապված որոշ արմատներ ավելի խորն են թափանցել՝ ձգտելով հողի խորին խոնավ շերտերը:

Ամփոփում

Ելնելով ԱրՊՀ-ի ուսումնափորձնական հողամասում կատարված դաշտային փորձերի արդյունքներից՝ հանգել ենք այն եզրակացության, որ փորձադաշտի հողի խոնավությունը, անբավարար ռոտզման պատճառով, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին խիստ նվազում է: Իսկ այդ ամիսներին ԼՂՀ տարածքում մթնոլորտային տեղումները շատ աննշան են (52մմ): Հողի խոնավության պակասը զգալի կրճատում է վազի տերևային մակերեսը, որից կախված խիստ ընկնում է օրգանական նյութերի սինթեզը: Անբավարար հողի խոնավության պատճառով ընկնում է արմատների հանրային սննդառությունը, որը բացասաբար է անդրադառնում ծագաբողբոջներում ծաղկաբույլերի սաղմնային զարգացմանը, որից էլ կախված է վազի բերքատվությունը:

Ուստի առաջարկում ենք հողամասը ռոտզել ըստ պահանջվող նորմայի:

Резюме

Исходя из результатов полевых опытов, выполненных на учебно-опытном участке АргУ, мы пришли к выводу, что по причине недостаточной поливки влажность почвы за период август-сентябрь резко понижается. А в этот период на территории НКР атмосферные осадки незначительны (52мм). По причине недостатка влажности почвы резко уменьшается листовая поверхность лозы, в связи с чем резко падает уровень синтеза органических веществ. По этой же причине уменьшается минеральное питание корней. Указанные факты отрицательно влияют на зародышевое развитие пазушных почек соцветий, от чего зависит урожайность лозы.

В связи с этим, предлагаем орошать землю в соответствии с требуемыми нормами.

Գրականություն

1. Պ.Կ. Այվազյան, Խաղողագործություն, Երևան, 2000թ.:
2. Захарова Е.Н., О плюшади питания виноградной лозы, Виноделие и виноградарство СССР, 1953, N11.
3. Колесников В.А., Метод измерения корневых систем плодовых и ягодных растений, Москва, 1962.
4. Мельник С.А., Труды одесского сельхозинститута, том VIII, Одесса, "Виноградарство и плодоловодство".

ЭПИДЕМИОЛОГИЯ И ПРОФИЛАКТИКА ГЕЛЬМЕНТОЗОВ СРЕДИ
ОРГАНИЗОВАННЫХ ДЕТЕЙ г.СТЕПАНАКЕРТА

З.Я. Асриян, А.А.Магакелян

кафедра стоматологии

В патологии человека, особенно детей, паразитарные инвазии – гельментозы- занимают особое место.

Гельментозы – заболеваемость, вызываемая гельментами. Различают 3 вида гельментозов человека – биогельментозы, геогельмсптозы и контагенозные гельменты. В организм человека возбудители гельментозов проникают главным образом двумя путями - пероральным и через кожные покровы - перкутаным. Гельментозы, возбудители которых не могут циркулировать в природе без участия человека, как биологического хозяина, относятся к антропонозам. Каждому виду червей специфична определенная локализация в организме человека. Число паразитирующих особей в организме человека может быть различна. Человек одновременно может быть поражен несколькими видами гельментов от 1 до 8 видов. Различные виды гельментов вызывают у хозяев разные болезненные состояния, в основе которых лежит развитие аллергических реакций на интоксикации продуктами метоволизма живых червей или продуктами распада погибших особей, механическое воздействие на ткани и органы.

В детском возрасте паразитарная инвазия чревата издержками анатомио-физиологических параметров роста и развития. В целом клиническая картина инвазии зависит от вида локализации гельмента, иммуно-биологического состояния организма человека, от интенсивности и множественности инвазии. Процесс ежегодной дегельмсптизации среди организованных детей и его эффективность заинтересовала нас, поэтому перед дегельментизацией нами была обследована контрольная группа детей – 183 человека, почти 1/3 детей, посещающих детские сады г. Степанакерта.

По результатам лабораторных анализов было выявлено, что дети в дет.садах г.Степанакерта поражены следующими гельментами: *Ascaris lumbricoides* liprin - геогельмент, антропоноз, окончательным хозяином и единственным источником инвазии является человек. В организме человека аскариды живут около года. Дети болеют чаще, чем взрослые. Пораженность в зонах теплого климата главным образом происходит в летние, весенние и осенние месяцы. По данным ВОЗ аскаридоз является наиболее распространенным паразитом. Аскаридами поражена почти треть населения планеты.

Вторым является *Enterobius vermicularis*- контагиозный гельментоз - антропоноз. Единственным источником инвазии является человек. Восприимчивость к инвазии всеобщая, но значительно чаще болеют дети. Ентеровиоз широко распространен во всех районах земного шара. Спорадически у детей выявляются цисты лямбли и карликовый цепень.

В октябре 2005г. была обследована на посительство яиц глистов контрольная группа 183 человек, а именно, воспитанники детских садов, расположенных в различных частях города. Из 183 детей поражены 70, что составляет 38.3%: по детским учреждениям выявлена следующая картина:

Сад N 1	из 38 обследованных детей	выявлено 11 пораженных, что составляет 30 %.
Сад N 2	из 14 обследованных детей	поражено 5, что составляет 35,7%
Сад Сосе	из 80 обследованных детей	поражены 30 37,5%
Аветаракчакан	из 19	10 38,3%

Таблица N1

Результаты лабораторных исследований на пораженность гельментами контрольной группы

N	Наименование садов	Кол-во детей	число поражен.	аскариды	острицы	лямбли	% поражен.
1	Сад 1	38	11	10	1	-	30
2	Сад 2	14	5	1	2	3	35,7
3	Сад- Сосе	90	30	19	8	3	37,7

4	Сад Аветарчакаш	32	14	7	7	-	43,7
5	Зангак	19	10	4	3	3	52,3
	Итого	183	70	41	21	9	38,3

Из 183 обследованных детей было выявлено 70 пораженных из них аскаридами – 41 ребенок, что составляет 22.4 % из общего числа и 58.5% от числа пораженных. Острицами поражены 20 детей, что составляет соответственно 11% и 28.5%. Цисты лямбли выявлены у 9 детей (соответственно 5% и 12.8%)

Таблица N2.

Пораженность различными видами гельментов среди контрольной группы

N	Наименование	количество пораженных	% пораженных
1	Аскариды	41	58,5
2	Острицы	20	28,5
3	Цисты лямбли	9	12,8
	Итого	70	100

Как видно из таблицы доля детей пораженных аскаридами очень высока и составляет 58,5%. При анализе данных о пораженности детей в разных возрастных группах выявлена следующая картина.

Таблица N3

Выявляемость гельментов в различных возрастных группах

N	Наименование	Кол-во детей	Число пораж.	%	Аскариды	Острицы	Лямблии
1	3-4 года	96	32	11,5	18	4	2
2	5-6 лет	87	38	26,4	23	16	7
	итого	183	70	37,9			

Процент пораженности гельментами в возрастной группе 3-4 года составляет 11,5%, а в группе 5-6 лет составляет 26,4%. Дети в 5-6 лет бывают более самостоятельны, меньше находятся под присмотром родителей, рацион питания более разнообразен, с большим использованием фруктов, овощей, зелени, отсюда высокая пораженность.

Нами также изучена пораженность гельментами среди разнополых детей.

Таблица N4

Выявляемость гельментов среди разнополых детей

N		девочки	мальчики
1	кол-во обслед. детей	89	94
2	кол-во пораж. детей	29	41
	% пораж. детей	39	61

Пораженность гельментами среди мальчиков составляет 61%, у девочек 39%, что можно связать с особенностями поведения мальчиков с меньшим соблюдением правил личной гигиены.

Согласно плана осенней дегельментизации мебендазолом сотрудниками СЭС была проведена проверка детских учреждений города на соответствие санитарно-гигиеническим нормам согласно СН и П N2-III-2.2.3. Проведена сан.-просветительская работа среди работников детских

учреждений по профилактике гельментозных поражений. Обследованы и подвержены дегельментизации все работники детских учреждений.

Согласно инструкции таблетками мебендазола были обеспечены 757 организованных детей из расчета 5 таблеток на одного ребенка -3781. По истечении 2-х недель повторно обследована контрольная группа пораженных детей.

Таблица N5

Пораженность гельментами детей после дегельметизации

N	Наименование садов	кол-во обследованных	кол-во выявленных
1	Сад 1	11	-----
2	Сад 2	5	-----
3	Аветарчакан	14	3
4	Запгак	10	1
5	Сосе	30	2
Итого		70	6 5%

Анализируя данные повторных лабораторных обследований процент пораженности гельментами среди организованных детей 38,3% снизился и составляет в среднем 3,5 %. Одновременно в результате лабораторных исследований выявлено, что около 3% детей из 183 поражены двумя видами гельментов - аскариды - острицы, аскариды - лямбли, аскариды - карликовый цепень.

Резюмируя выше изложенное мы пришли к выводу, что эффективность дегельметизации составляет 95-97%, а 3-5% можно связать со следующими факторами:

1. Прием лекарств дома, не по инструкции, вместо 5-ти 1 или 2 таблетки
2. Несоблюдение правил личной гигиены детьми
3. Слабая сан.-просветительская работа среди родителей детей
4. Большая скученность в садах города, а отсюда необходимость увеличения мест в детских учреждениях
5. Слабый контроль санитарной службы в детских организациях
6. Отсутствие повторных обследований детей с целью выявления гельментов.

Резюме

Эпидемиология и профилактика гельментозов среди организованных детей города Степанакерта.

Изучив пораженность гельментами детей в организованных коллективах города Степанакерта на примере контрольной группы в 183 ребенка выявлено 70 пораженных детей, что составляет 38.3 %, аскаридами поражены из 183 – 41 ребенок, что составляет 22.4 %, а из доли пораженных (70) 58.5 %, острицами поражены 28.5, цистами лямбли -12.8 %. Процент пораженности в возрастной группе 3-4 года – 11.5%, в 5-6 лет – 26.4%. Среди мальчиков 61 % пораженных, среди девочек- 39 % .

После проведенной дегельментизации пораженность детей снизилась от 38.3% до 3-5 %, то есть эффективность дегельментизации составляет 95-97%.

Литература

1. Пяткин К. Д., Кривошеин Ю.С., Микробиология, Москва , 1980 г.
2. Шекоян В. А., Микробиология, вирусология, Ереван, 1996г.
3. Найт Р., Паразитарные болезни, Медицина, Москва, 1985г.

ԱՐՅԱՆԻ ԵԹԵՐԱՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա. Է. Ավետիսյան, Մ. Կ. Հովհաննիսյան
քիմիայի ամբիոն

Արցախը հարուստ է բազմաթիվ արծեքավոր եթերայուղատու կուլտուրաներով, որոնց հիման վրա ներքայտղերի ստացման արտադրության հիմնումը կնպաստի հանրապետության տնտեսության և գիտության զարգացմանը:

Վերջին տարիներին բնական հարստությունների ճիշտ օգտագործման պրոբլեմը դառնում է խիստ արդիական:

Արցախը, չնայած զբաղեցնում է բավականին փոքր տարածք, սակայն տարբերվում է ֆլորայի բազմազանությամբ և հարստությամբ: Մեր հանրապետության բուսական ծածկության կարևոր տեղ են զբաղում եթերայուղերի ստացման համար պիտանի, բազմաթիվ արծեքավոր վայրի և մշակովի եթերայուղատու բույսերը [1,2,3]:

Եթերայուղատու բույսերը մարդկության կողմից օգտագործվել են շատ վաղ ժամանակներից: Դեռևս մեր թվարկությանից յոթ հազար տարի առաջ եգիպտացիները տարբեր նպատակներով օգտագործել են համեմունքային և բուրավետ բույսերի յուղեր, իսկ հնդկացիներին հայտնի են եղել վարդի յուղի ստացման եղանակները [4]: Այդ արծեքավոր բնական եթերայուղերի ստացման տեխնոլոգիաները հետագայում Հնդկաստանից և Եգիպտոսից տարածվել են այլ երկրներ և ներկայումս պետությունների ճնշող մեծամասնությունն այս կամ այն չափով արտադրում են եթերայուղեր, որոնց համաշխարհային արտադրանքը տարեկան կազմում է ավելի քան 20 հազար տոննա [5]:

Եթերային յուղեր պարունակող բույսերը շատ են: Ամբողջ աշխարհում հաշվում են եթերայուղատու բույսերի 3000 տեսակ, որոնցից արդյունաբերական նշանակություն ունեն ավելի քան 200-ը: Առավել արծեքավոր եթերայուղատու բույսերը մշակովի կուլտուրաներ են: Նախկին ԽՍՀՄ-ում մշակվում էր մոտ 48 տեսակ եթերայուղատու մշակաբույս (անխաճ, ռեհան, գինձ, հիրիկ, դաղձ, քնձոճ, հունական սամիթ, եղեսպակ, խորդենի, սպիտակաճ նարդոս, հասմիկ և այլն) [6]:

Արցախի բնակիչնայական պայմանները նպաստավոր են մի շարք արծեքավոր եթերայուղատու մշակաբույսերի աճեցման համար: Մեր հանրապետության անհատական տնտեսություններում աճեցվում են այնպիսի արծեքավոր կուլտուրաներ, ինչպիսիք են պղպեղադաճը, համենը (գինձը), ռեհանը, կարոսը (մաղաղանոսը), սամիթը, դափնին, հիրիկը և շատ այլ եթերայուղատուներ: Արցախի ֆլորան աչքի է ընկնում նաև վայրի եթերայուղատու բույսերի սնձ հարստությամբ: Ամենատարածված կուլտուրաներից կարելի է նշել ուրցը, կատվադաճը, գինին, օշինդրը, կատախտոցը, թոնջխտոցը, հազարատերևուկը, խնկածառիկը, երիցուկը, մանուշակը, գալյուկը և բազմաթիվ այլ եթերայուղատու բույսեր [1,2,3]: Բայց չնայած այդ սնձ բազմազանությանը, հանրապետության վայրի և մշակովի եթերայուղատու բույսերը ըստ նշանակության չեն օգտագործվում: Նրանց միայն չնչին մասն է օգտագործվում որպես սննդամթերքների բաղկացուցիչ մաս: Այնինչ դրանք արծեքավոր եթերայուղատու բույսեր են, որոնք պետք է օգտագործվեն գյուղատնտեսական թանկարժեք եթերայուղերի ստացման համար:

Եթերայուղատու բույսերը բուրավետ յուղերի արտադրության բնական աղբյուր են: Նրանց տերևներում, ծաղիկներում, արմատներում և այլ օրգաններում պարունակվում են զնդող բուրավետ նյութեր՝ եթերայուղեր: Վերջիններքա հիմնական բաղադրիչ մասը տերպեններն են: Եթերային յուղերից ամբողջաժ է մոտ հազար օրգանական նյութ՝ հազիցած, չեղցեցած, ալիֆատիկ, արոմատիկ, տերպենային, ցիկլավոր ածխաջրածիններ և դրանց թթվածնավոր ածանցյալներ՝ սպիրտներ, ալդեհիդներ, կետոններ, եթերներ, օքսիդներ, լակտոններ, ինչպես նաև հետերոցիկլավոր միացություններ [6]: Տարբեր բույսեր պարունակում են տարբեր քանակի եթերային յուղեր, օրինակ, դաղձը՝ 0,5-2,5 %, ուրցը՝ 0,1-0,5 %, օշինդրը՝ 0,5-2,0 %, կատաղադձը՝ մինչև 0,9% [2]: Եթերայուղի բաղադրությունը և քանակը կախված է բույսի տեսակից, աճման պայմաններից, հասակից, վեցնտացիայի փուլից, բերքահավաքի պայմաններից և այլն:

Եթերայուղային հումքը մշակում են ֆիզիկաքիմիական և մեխանիկական մեթոդներով [7]: Առաջինին վերաբերվում են եթերային յուղերի թորումը քրային գալորշիներով, լուծամանումը ցնդող և չցնդող տուփներով, առքցիան տարբեր տորենությունով: Մեխանիկական մեթոդին է պատկանում մակերևույթ կամ քերտով եթերայուղային հումքի մշակումը: Վերամշակված մեթոդի ընտրությունը կախված է հումքի հատկությունից, եթերայուղերի գտնվելու տեղից,

բաղադրությունից, հումքի հետ եթերայուղի կապի բնույթից: Եթե եթերայուղերը գտնվում են կապված վիճակում, ապա հումքի ֆերմենտացումը կամ նախորդում է հիմնական վերամշակման արժեքին, կամ համընկնում է նրա հետ: Ընտրված մեթոդը պետք է ապահովի վերջանյութի առավելագույն և ամենապակաս զեղումը:

Կախված քիմիական բաղադրությունից՝ եթերայուղերի նշանակությունը բազմազան է: Նրանք օգտագործվում են բժշկության, օծանելիքների և խմիչքների արտադրության, սննդադրույունաբերության մեջ: Այսպես, պղպեղապղծի եթերայուղը լայնորեն կիրառում են բժշկության մեջ, սննդի և օծանելիքի արտադրություններում: Այն օգտագործում են կոկորդի, շնչուղիների, լյարդի հիվանդությունների բուժման, գլխացավերի, ներպզգիայի, սրտի անբավարարության, արյան բարձր ճնշման ժամանակ: Կատվազազի եթերայուղը լայնորեն օգտագործում են օծանելիքի, օշինդրինը՝ սպիրտային խմիչքների, սուսամբարինը՝ դեղագործության մեջ:

Ժամանակակից արտադրության յուրաքանչյուր քնագավառի ամենահիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում հումքի ամբողջական օգտագործումը: Դա լիովին վերաբերվում է եթերայուղային հումքի մշակմանը, քանի որ նրա բաղադրության մեջ մտնում են արժեքավոր նյութերի մի ամբողջ շարք՝ ճարպայուղեր, սպիտակուցներ, ածխաջրեր, վիտամիններ և այլն: Եթերայուղային հումքի տարբեր տիպի թափոններից ստանում են կենսաբանորեն ակտիվ նյութեր, վիտամիններ, արժեքավոր մոմեր, պիտանի նյութերով հարուստ անանակեր և այլն [7]:

Այսպիսով, Արցախում կան եթերայուղերի ստացման համար պիտանի բազմաթիվ արժեքավոր վայրի և մշակովի եթերայուղատու բույսեր, որոնց էկոլոգիապես մաքուր արդյունաբերական մշակությունը հանրապետության համար կունենա հեռանկարային ռազմավարական նշանակություն: Այդ կարևոր արտադրության հիմնումը վճռական դեր կխաղա Արցախի տնտեսության և գիտության զարգացման գործում:

Ամփոփում

Սույն հոդվածում համառոտ նշվում է Արցախի վայրի ու մշակովի եթերայուղատու բույսերի և նրանց հիման վրա եթերայուղերի էկոլոգիապես մաքուր արտադրություն հիմնելու հեռանկարների մասին:

Резюме

В данной статье указываются дикорастущие и культивируемые эфиромасличные растения Арцаха и перспективы их использования для создания местного экологически чистого эфиромасличного производства.

Գրականություն

1. Прилипка Л.Н., Растительный покров Азербайджана, Баку, 1970, с. 170.
2. Дамиров И. А. и др., Лекарственные растения Азербайджана, Баку, 1988, сс. 71-119.
3. Гурвич М. Л. и др., Культура Котовника закавказского-перспективного конкурента Розовой герани, Сб.: IV Международн. конгр. по эфир. масл., Тбилиси, 1968, с.127.
4. Иванов С.Л., Факторы маслообразовательного протесса в растениях, Тр. Всесоюз. съезда по селекц.и генет., 1930.-с.120.
5. Оганесян В.А., Особенности высокомасличных сортов герани, Тез. докл. Ереван, 1988, сс. 8-14.
6. Հայկական Սովետական Հանրագիտարան, 1977, հ. 3, էջ 489:
7. Сидоров И. И., Турышева Н.А., Фалеева Л.П., Ясюкович Е. И., Технология натуральных масел и синтетических душистых веществ, М., Легкая и пищевая промышленность, 1984, с. 368.

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ ԼՂՀ-ում (1993թ. փետրվար-մարտ ամիսներին)

Տ.Վ. Հակոբյան
պատմության ամբիոն

Մայիսյան հաղթանակներից հետո 1992թ. հունիսի 2-6-ը կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի (ԳԽ) առաջին նստաշրջանն ապացուցեց, որ Արցախում դեռ առկա էին ներքին հակասություններ, ինչը որոշ քաղաքական հանգամանքների բերումով հովանավորում էին ՀՀ իշխանությունները¹։ Նստաշրջանից հետո չբացահայտված դեմուս առնչվածային հանգամանքներում Ադրբեյջանը շատ կարճ ժամանակամիջոցում բռնազավթեց Ճահուլյանի շրջանը ու Մարտակերտի շրջանի մի մասը։ Նորաստեղծ հանրապետությունում ստեղծվեց ծայրաստիճան լարված ապակայունացնող իրավիճակ, որը զարգանում էր կայծակնային արագությամբ՝ սպառնալով ԼՂ պետականության անվտանգությանը։ Նման էքստրեմալ պայմաններում ԼՂՀ իշխանությունները, գտնվելով քաղաքական ճնշման տակ, փորձեցին համապատասխան միջոցառումներ իրականացնել և դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից։ Սակայն հետագա դեպքերի սպառնալից զարգացումներից խույս տալու նպատակով, ինչը կարող էր ճակատագրական լինել՝ ՀՀ ղեկավարության պահանջով կառավարման համակարգում կատարվեցին արմատական փոփոխություններ։

1992թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահության և նախարարների խորհրդի (ՆԽ) համատեղ նիստի ժամանակ ընդունված որոշումով ստեղծվեց մի մարմին, որը կռվեց Պաշտպանության պետական կոմիտե (ՊԿԷ)²։ Նրան փոխանցվեցին ԼՂՀ ՆԽ-ի, ինչպես նաև ԼՂՀ ԳԽ-ի նախագահության մի շարք լիազորություններ։ ՊԿԷ-ի նախագահ նշանակվեց Ռ.Քոչարյանը։ ՊԿԷ-ի նախագահի առաջին տեղակալ նշանակվեց ԼՂՀ ՆԽ-ի նախագահի առաջին տեղակալ Բ.Առաշչյանը, ՊԿԷ-ի նախագահի տեղակալ՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության անդամ, պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման մշտական հանձնաժողովի նախագահ Վ.Բաբոյանը։ Պետական կառավարման նորաստեղծ մարմնի կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ ԳԽ-ի նախագահության անդամ, պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վ.Բալայանը, ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահ Ս.Սարգսյանը, ԼՂՀ ներքին գործերի նախարար Ա.Խազգուլովը, ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի առաջին տեղակալ Ս.Բաբայանը։

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծում, թե կենտրոնացված իշխանական համակարգը այդ դժվար պարագայում պետք է արդարացված լիներ, սակայն հետագայում, պետաշինարարական գործընթացը ուսումնասիրելով և վերլուծելով, հանդիպում ենք մի շարք թերությունների։

- Կարծես թվում էր նաև, թե ՊԿԷ-ի ստեղծումով կհարթվի ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ ղեկավարության փոխհարաբերությունները, սակայն բանակցային գործընթացում (1992թ. օգոստոսի 27-ի Ալմա Աթայի և Մոչկի սեպտեմբերի 19-ի համաձայնագրերը) տեղի ունեցած տարաձայնությունները նորից պատճառ հանդիսացան երկկողմ հարաբերությունների վատթարացմանը։ Կարելի է ասել, որ բանակցային գործընթացում ՀՀ նախագահը նորից չէր վստահում ԼՂՀ օրենսդիր իշխանությանը։ Ուստի հակառակ թեր սկզբնական շրջանում փորձեց ուղիներ որոնել և թարելավել հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ։ Այդ առնչությամբ 1992թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակությունը՝ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի գլխավորությամբ այցելեց Երևան և հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Ա.Տեր-Պետրոսյանի հետ։ Այդ հանդիպումների նպատակն էր պարզել՝ արդյո՞ք փոփոխություններ տեղի չեն ունեցել ԼՂՀ հանդեպ վարած ՀՀ քաղաքականության մեջ, մանավանդ ինչպես նշեցինք, երբ ԼՂՀ վերաբերյալ վերջին երկու համաձայնագրերը կայացվել էին առանց ԼՂՀ ներկայացուցիչների

Այդ հանգիստներին հետո սկսվեց նորից սրվել ԼՂՀ ներդադարական դաշտը: Որոշակի տարածաշրջաններում կարող են նկատվեցին ՊՊԼ-ի և Գ-ի նախագահության միջև՝ ԼՂՀ օգնության հիմնադրամի ստեղծման վերաբերյալ: Հիմնադրամ ստեղծելու մասին ԼՂՀ Գ-ի նախագահությունը որոշում էր կայացվել դեռևս 1992թ. նոյեմբերի 30-ին, որը նպատակ ուներ կենտրոնացնելու համարապետությունում մուտք գործող օգնությունը: Այդ առնչությամբ ՊՊԼ-ի նախագահը դեմ դուրս եկավ ԼՂՀ Գ-ի որոշման դեմ:՝ Երևի ՊՊԼ-ի նախագահի նման վերաբերմունքի պատճառ կարող էր հանդիսանալ այն, որ հիմնադրամը ստեղծվում էր ԼՂՀ Գ-ի նախագահության վերահսկողության ներքո, իսկ այս արդեն հուշում էր որոշակի ֆինանսական և այլ կայանաժողովուն ԼՂՀ Գ-ի նախագահությունից:

Նույնացայում տարբեր պատճառներով ի հայտ եկան թագահայտ առճակատումներ, որոնք հանցեղանի ինչպես նաև ճշնությունների՝ ԼՂՀ Գ-ի նախագահության անդամների և Գ-ի որոշ պատասխանատուների վրա՝ վերլուծելով ստեղծված իրավիճակը, կարելի է գալ այն նպատակամաս, որ ՀՀ ղեկավարությունը ՊՊԼ-ի լծակներով փորձում էր նորից պատռել ԼՂՀ նախագահության «անհագանք» անդամներին:

1993թ. փետրվարի սկզբներին Արցախի իշխանությունների միջև գոյություն ունեցող հակասությունները թեմակոնցիան մի նոր շրջան: Փետրվարի 10-ին, Ադրբեջանի կողմից ուղղակի ԼՂՀ տարածքի բռնագաղթման կապակցությամբ ԼՂՀ Գ-ի նախագահությունը որոշում կայացրեց 3 ամսով, մինչև 1993թ. մայիսի 12-ը նրկարագել 1992թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ Գ-ի նախագահության հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում թագավան գրության ժամկետը: Նույն դրոշմամբ, թագավան գրության հայտարարման կապակցությամբ ստեղծված ՊՊԼ-ն պետք է փետրվարի 18-ին ԼՂՀ Գ-ի նախագահությանը ներկայացներ հաշվետվություն՝ անցած 6 ամսվա ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ: Ինչպես նաև առաջիկա այդ 2 օրերին ՊՊԼ-ն պետք է ԼՂՀ Գ-ի նախագահությանը հանձնի իր ընդունած որոշումները, կարգադրություններն ու այլ փաստաթղթեր: Փետրվարի 12-18-ը փորձաքննությունը պետք է ճշտեին դրանց օրինակներում:

Այդ առնչությամբ ՊՊԼ-ի նախագահ Ռ.Քոչարյանը նամակ հղեց ԼՂՀ Գ-ի նախագահությանը, ուր նշված է. «Անհրաժեշտ եմ համարում իմ վերաբերմունքը արտահայտել ԼՂՀ Գ-ի հանրահայտության՝ «ԼՂՀ ՊՊԼ-ի 6 ամսվա գործունեության մասին» հաշվետվությունը լսելու և ԼՂՀ Գ-ի նախագահության՝ «ԼՂՀ-ում թագավան գրությունը նրկարագելու հրամանագրի մասին» 1993թ. փետրվարի 10-ին ընդունած որոշման վերաբերյալ:

Մտառանգված փաստաթղթերը վկայում են այնպիսի մի լուրջ հարցի նկատմամբ, ինչպիսին թագավան գրության մասին հարցն է, մակերեսային մոտեցման մասին:

ԼՂՀ Գ-ի նախագահության թագավան գրությունը նրկարագելու ժամկետի անհրաժեշտության մասին մեր կողմից հղված նամակում ձեռնկրկված են նաև այնպիսի առաջարկության հիմնական շարժառիթները, սակայն դրանք հաշվի չեն առնվել:

Ռ-ագավան գրության նույնպա ժամկետը ոչ մի կերպ չի կարող նպատակն թագավան գրության կանոնավարողի, ոչ մի լուրջ ու նրկարածակման միջոցառման իրականացմանը, պաղեցնում է ինքնապաշտպանության շարքերում ծառայելու մոդիլիզացվածներին: Ռ-ագավան գրության ժամկետի այդպիսի կարճատև: նրկարագելու դավադրություն է գորակոչման նախկին անձանց և նրանց տանում բոլոր ձեռքով դրանից խուսափելու ու սպառողական դիրք գրավելուն: Հատկապես պետք է ընդգծել այն պարագան, որ նման որոշումը թուրքի մագուրություն: Իսկ Ադրբեջանի բարձրաստիճան ղեկավարների բազմիցս արած հայտարարությունները, մոդիլիզացումը շարունակելու և թագավանկարի բոլոր տեղամասերում մարտական գործողությունների ակտիվացումը հաստատում են պատերազմ շարունակելու հաստատված դիրքի նկատմամբ ԼՂՀ ամբողջ տարածքի լրիվ բռնագաղթում է:

սորիքի (Նխ)

որ կոչվեց

ինչպես նաև

նշանակվեց

ուսակազմի

սպասարկության

միջապահման

և նորատեղի

անության և

տեղամասերում

և հետագայում,

ինչպես նաև

հետագայում,

նմա մի շարք

դիր մարմինի

բանակցային

ներքինի 19-ի

գլխավորում

ընդին է առնել,

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

առնում ԼՂՀ

Ինչ վերաբերում է ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրին, որում հիշեցվում է ԼՂՀ ՊՊԼ-ի գործունեության ժամկետի մասին, ապա այդպիսի ժամկետ չի հաստատվել: Ռազմական դրության կարգավիճակի ժամկետը, որն իրականացնելու է կոչված ԼՂՀ ՊՊԼ-ն, նրկարաձգվում է, եւ այդ մասին տեղեկությունը կարող է քննարկվել միայն այդ ժամկետը լրանալուց հետո:

Անհասկանալի է նաեւ ԼՂՀ ՊՊԼ-ի գործունեության ժամանակահատվածում ընդունված բոլոր կարգադրություններն ու որոշումները ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը ներկայացնելու հարցադրումը: Հաշվի առնելով, որ ՊՊԼ-ն միաժամանակ իրականացնում է եւ ԼՂՀ ՆՆ-ի դերը, անցած ժամանակամիջոցում ընդունվել են նորմատիվային եւ օպերատիվ բնույթի մեծ թվով փաստաթղթեր, որոնց մի մասը անհրաժեշտության դեպքում ուղարկվել է ԼՂՀ ԳԽ-ի նախագահություն:

Այսպիսով՝ 6 ամսվա ընթացքում, փաստորեն ոչ մի հետաքրքրություն չցուցաբերելով ռազմական դրության կանոնակարգի իրականացման հարցերի նկատմամբ, չփորձելով ՊՊԼ-ին որեւէ աջակցություն ցույց տալ՝ նրա առջև կանգնած խնդիրները լուծելու գործում, ԳԽ-ի նախագահությունը ընտրել է նրա վրա, այսպես ասած «ներգործելու» անընդունելի ծնել: Եվ, վերջապես տարակուսանք է հարուցում ռազմական դրության հարցը առանց ՊՊԼ-ի եւ ինքնապաշտպանության ուժերի կարծիքը հաշվի առնելու, իսկ առավել եւս՝ առանց դրանց ներկայացուցիչներին հրավիրելու քննարկման դնելը:

Եթե ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, այնուամենայնիվ, հնարավոր է համարում առանց ՊՊԼ-ի եւ ԽՊՈՒ-ի ուղղակիորեն լուծել պաշտպանական բնույթի հարցերը, ապա առաջարկում եմ, որ նախագահությունն իր վրա վերցնի ռազմական դրության կանոնակարգի իրականացման գործունեությունը եւ այստեղից բխող ողջ պատասխանատվությունը⁷:

Փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ-ի մանդատային, մարդու իրավունքների, պարկեշտության եւ ազգությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հրավիրվեց ԼՂՀ ԳԽ-ի պատգամավորների խորհրդակցություն: Հանդիպման ժամանակ, որին մասնակցել են նաեւ ԼՂՀ ՊՊԼ-ի եւ ԽՊՈՒ-ի ղեկավարությունը, առաջարկվեց քննարկել ՊՊԼ-ի լիազորությունների լրանալու եւ ռազմական դրության ժամկետի նրկարաձգման հետ առնչվող հարցեր: ՊՊԼ-ին մոտ շրջանակների ներկայացուցիչները ռազմական դրությունը մինչեւ պատերազմի ավարտը նրկարաձգելու եւ ՊՊԼ-ին լրացուցիչ լիազորություններ տրամադրելու պահանջներ ներկայացրեցին⁸:

Միաժամանակ հանրապետության ԶԼՄ-երը սահմարձակ արշավ սկսեցին ԼՂՀ ԳԽ-ին հեղինակազդելու նպատակով:

Այդ առնչությամբ փետրվարի 17-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Վերջերս ԶԼՄ-ներով քայլեր են ձեռնարկվում հակադրել ԼՂՀ օրենսդիր եւ գործադիր իշխանություններին, չկշռադատված մեղադրանքներ են հնչում օրինավոր ընտրված ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հասցեին:

Պատմության մեջ մեկ անգամ չէ, որ փորձեր են արվել մեր ժողովուրդը նրկատել հակամարտող հատվածների, որի հետևանքով նրա լավագույն հատվածը պարբերաբար կամ ոչնչացվել է, կամ տարագրվել: Մենք ողջախոհության ենք կոչում հանրապետության ներքաղաքական իրավիճակի նորմալացմանը շահագրգիռ բոլոր անձանց եւ մարմիններին: Ոչ ոք իրավունք չունի մոռանալու, որ ինքը հսկայական պատասխանատվություն է կրում Արցախի եւ ողջ Հայաստանի ճակատագրի համար: Պատմությունը մեզ եզակի հնարավորություն է ընձեռել անմիջապա արկածը մտնել ժողովրդի ազատագրման եւ միավորման գործին, եւ ոչ ոք չի ների մեզ, եթե ձեռքից քաջ թողնենք այդ հնարավորությունը⁹:

Նույն օրը հրապարակվեց Արցախի ժողովրդական ճակատի վարչության հայտարարությունը: Ընդգծելով ՊՊԼ-ի դրական աշխատանքը՝ ժողովրդական ճակատի վարչությունը օրենսդիր մարմնին մեղադրել է անգործության մեջ¹⁰: ՊՊԼ-ի հաշվետվությունը լսելու մասին ԳԽ-ն նախագահության որոշումը այդ հայտարարության մեջ բնութագրվել է իբրեւ «քաղաքական պատվախնդրության» դրսևորում: Փաստաթղթի հեղինակները ԳԽ-ի նախագահությունից պահանջել են անհապաղ որոշում ընդունել ռազմական դրության ժամկետը 3 ամսով նրկարաձգելու եւ «ընդհուպ մինչեւ պատերազմի ավարտը ռազմական դրության ջեմի մտցնելու մասին»: Հայտարարության մեջ պահանջվել է նաեւ ՊՊԼ-ն վերակազմել Պետական խորհրդի՝ տրամադրելով լրացուցիչ լիազորություններ, եւ հրավիրել Սահմանադիր ժողով

վերջինս հանձնելով օրենսդրական իշխանությունը: Այդ առնչությամբ առաջարկվել է գումարել ԼՂՀ ԳԽ-ի նստաշրջան:

Սման իրավիճակի պայմաններում ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը փետրվարի 17-ին նամակ հղեց ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանին¹¹: Սամակում հաղորդվում էր ՀՀ տնտեսական և քաղաքական իրավիճակի պատճառների, ՀՀ նախագահի և ԼՂՀ օրենսդիր մարմնի փոխհարաբերությունների, ինչպես նաև բանակցային գործընթացում ԼՂՀ դիրքորոշումների առնչման մասին:

Поссорилась с другом, была в депрессивном состоянии, молчалива. Выпила 3 пачки “Аскофен”.

П-16/07 – 1975 г.р., 2004 г. муж.

Выпил 2 бутылки водки и в состоянии алкогольного опьянения он перерезал себе вены на левой руке.

П-16/15-1994 г.р., 2004 г. жен.

Выпила эссенцию из-за ревности к мужу. У мужа была любовница, она не смогла перенести это.
II-16/24-1974 г.р., 2004г. муж.

Перерезал себе вены, жалуясь на плохую жизнь. Не следует забывать, что безработица и бедность имеют сильное суицидальное влияние.

Диагноз: "Шизофрения".

II-16 -1976 г.р., 2005 г. жен.

Отравилась пищевой эссенцией после очередного скандала с мужем.

II-16/24 -1985 г.р., 2006 г. жен.

Выпила 30 таблеток "Демидрол".

Студентка объяснила, что ей надоела эта жизнь, она устала от этой жизни.

Привели несколько примеров попытки к самоубийству.

Суицид- чума XXI века

По данным экспертов, ежегодно в мире самоубийством жизни заканчивают почти один миллион человек, а попытки суицида предпринимают 10-20 миллион человек.

-По данным агентства социальной безопасности АСБ в России уровень самоубийств в молодежной среде составляет 53 случая на 100 тыс. населения. В последние годы в России совершаются ежегодно около 55 самоубийств.

-В Иркутской области на 100 тыс. населения было отмечено 40,2 случая самоубийств среди подростков 81,1 случаев взрослого суицида. В 2004г. в Иркутской области 19 % всех летальных исходов пришлось на самоубийство, что на 10 % больше, чем в 2003г. По словам специалиста, это говорит о недоступности психологической помощи для детей этого возраста.

-Недавно шведский Центр суицидальных исследований опубликовал доклад, в котором сообщается, что по абсолютному количеству самоубийств среди подростков в возрасте от 15 до 19 лет Россия занимает первое место.

-В Бурятии количество самоубийств среди подростков почти в три раза выше, чем в среднем по России.

-В республиках Балтии ежегодно в результате самоубийств погибает 30 человек из ста тысяч.

-За последние десять лет число самоубийств среди подростков Одесской области возросло втрое.

-120-таково среднее число самоубийств среди белорусских подростков в год. В минувшем году покончили с собой 100 юношей и девушек в возрасте от 15 до 19 лет и 26 подростков от 10 до 14 лет. А попыток суицида было чуть ли в 10 раз больше. И с каждым годом количество увеличивается. В Татарстане в 2000-2004гг. самоубийство составляет 24,4 %. В 2004г. зарегистрировано 37 случаев самоубийств со смертельным исходом и 9 случаев - незавершенного суицида.

-Во Франции число самоубийств среди подростков за последние 10 лет утроилось.

-В Польше число самоубийств среди подростков и юношей увеличилось в 4 раза, из них лица мужского пола 21 %.

-В Японии в 2002г. число самоубийств среди 20-летних подростков повысилось на 22 %.

-По данным НИИФЗОЖ-Национальный Центр проблем формирования здорового образа жизни растет число самоубийств среди детей и подростков. У мальчиков- подростков этот показатель составил 10,4 на 100 тыс., у девочек-подростков- 3,7 на 100 тыс населения.

-В Степанакерте за последние 10 лет совершено 2 самоубийства среди подростков и молодежи на 57 тыс. населения.

В растерянности перед самим собой и всем, что вокруг него происходит, часто вынужденный в одиночку искать себе дорогу сквозь джунгли, униженный экономической зависимостью в семье и туманным будущим в обществе, подросток поражен кризисом смысла жизни, который ведет его к наркомании, алкоголизму или агрессии, к подавленности и к самоубийству.

Изолированный, потерянный и одинокий, суицидент делает вывод, что ничего в жизни не видел, что его жизнь пуста, он существует без собственной жизни и любая попытка перемен бессмысленна. Из приведенных наблюдений складывается отчетливое впечатление, что самоубийца не был против жизни как таковой, а сопротивлялся лишь некачественному ее проживанию. Некачественное проживание также обесмысливает жизнь, и тогда

неудивительно появление суицидальных идей, которые силой внушения постепенно или стремительно захватывают сознание. Так, в теле «рождается» новая личность, жизнь которой завершается самоубийством.

Таблица 1

Возраст и пол подростков и юношей, которые совершили или пытались совершить самоубийство в г. Степанакерте за период с 2002 по 2006 годы

Пол	В о з р а с т																		Обш ее числ о
	до 14	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	
муж.	1	-	-	1	1 само уб. 1	-	-	-	1	-	-	-	1	-	1	-	-	4	10 (2 само- убийс тв.)
жен.	-	-	-	-	-	1	1	1	1	1	-	-	2	-	1	1	1	-	10
Всего	1	-	-	1	1	1	1	1	2	1	-	-	3	-	2	1	1	4	20

Из 20 подростков и юношей:

2- самоубийства (муж. пол)

18- незаконченные самоубийства

Таблица 2

Возраст и пол подростков и юношей, которые совершили или пытались совершить самоубийство в г. Степанакерте за период с 2002 по 2006 годы

Способ и средства / пол	Число самоубийств и попытка к самоубийству по годам					Всего
	2002	2003	2004	2005	2006	
Отравление	1	3	5	3	2	14
Повешение	1 самоуб.					1
Утопление						
Огнестрельное оружие						
Прыжок с высоты						
Гибель под колесами транспорта						
Самопорезы		2	2			4
Электрошок						
Ожоги			1 самоуб.			1
Голод						
Всего	2	5	8	3	2	20

Причины и мотивы самоубийства и попытки к самоубийству
(2002 – 2006 гг.)

Причины и мотивы	Число случаев
1. Мотив неизвестен	-
2. Депрессия	1
3. Утрата смысла жизни	4
4. Ревность	3
5. Ссора с родителями	2
6. Психологическое заболевание	3
7. Брачные конфликты	3
8. Нежелательная беременность	2
9. Бедность и тяжелая ситуация в семье	2
Всего:	20

Таблица 1
вершить

Общ ее числ о	
10 (2 само- убийс .)	
10	
20	

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են դեռահասների և պատանիների սուիցիդալ վարքը: Մեծ նշանակություն են դարձնում հիմնականորեն տարիքային ասպեկտներին, վերլուծվում դեռահասության և պատանեկության հասակի յուրահատկությունը, ինչպես նաև ինքնասպանության պատճառները, միջոցները, մոտիվները, որոնք թաքնված են շրջապատող մարդկանց հարաբերություններում, առաջին հերթին ծնողների հետ: Սխալ դաստիարակությունը, հատկապես մեծերի անուշադրությունը երեխաների պահանջներին և էմոցիոնալ փճակներին ամենագլխավոր գործոնն է, որը դրդում է երիտասարդներին հուսահատական վարմունքի:

Դրա հետ միասին տարբերվում են նաև սոցիալ-հոգեբանական ընտանիքների տիպեր, փոխհարաբերությունների ոճ, որում ստեղծվում են ինքնասպանության պոտենցիալ փտանգ: Հոդվածում ցույց է տրվում փճակագրական տվյալներ դեռահասների և պատանիների մասին, որոնք վարձել են կատարել ինքնասպանության փորձ և ինքնասպանություն: (ք. Սիփանակերտ 2002-2006):

Таблица 2

ить

Всего	
14	
1	
4	
1	
20	

Резюме

В статье анализируется суицидальное поведение подростков, юношей. Особое внимание уделяется возрастному аспекту проблемы. Анализируется специфика подросткового и юношеского возраста, а так же причины, способы, мотивы самоубийства и попытки к самоубийству, которые кроются в отношениях с окружающими, прежде всего с родителями. Неправильное воспитание, в особенности невнимание взрослых к нуждам и эмоциональному состоянию детей – один из основных факторов толкающих молодых людей на отчаянный поступок.

Наряду с этим выделяются социально-психологические типы семей, стиль взаимоотношений, в которых создает потенциальную опасность самоубийства. В статье указывается статистические данные о подростках, юношах, которые совершали попытку самоубийства и самоубийство. (2002-2006г. г. Степанакерт)

Литература

1. Амбарцумова А.Г., Теоретико-методологические и организационные проблемы суицидологической первенции, М., 1984.
2. Бердяев Н.А., О самоубийстве, Психологический журнал, том 13, N 1-2, М., 1992.
3. Ребер Артур, Большой толковый психологический словарь, тома I-II ООО. Изд-во АСТ. 2003.
4. Пурич-Пейакевич Йу, Дуньич Душин Й., Самоубийство подростков, М., 2000.
5. Сикорский И.А., Психическое состояние перед самоубийством, М., 1986.
6. Столин В., Самосознание личности, М., 1983.
7. Грин Э.А., Психологический аспект самоубийства, Психология и жизнь, Изд-во «Зангак». 2001 (2).

ԱՆՏԻԿ ՓԵԼԻՍՈՓԱ՝ ՊԼԱՏՈՆԻ ՀԱՅԱՅԵՆԵՐԸ ՀՈԳՈՒ ԲԱՅԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԸ

Մ. Ե. Մելիքսեյան

հոգեբանության և մանկավարժության ամբիոն

70 տարի մենք ապրել ենք մի ժամանակաշրջան, երբ սուրբիմացվել (վնիացվել) է մի գաղափարայնություն, որի առնունք էր մատերիալիստական և ժխտվել և ոչ թե քննադատվել, իդեալիստականը ու թաղթմանք և մասայական մատչելիությանը էր հասցվել այն ինչ համահունչ էր սոցիալիստական գաղափարայնությանը: Բանի որ վերջին ժամանակները հաճախակի է խոսվում հոգու անմահության, այնպիսիային կյանքի հոգեմեղմության մասին, նպատակ դրվեց հասարակության լայն խաղերի ներկայացնել Պլատոնի մոտեցումները հոգու անմահության շուրջ:

Չիսական փիլիսոփա Կոնֆուցիոն նշել է. «Ուսումնառիրնցներ անցյալը, եթե ուզում եք կանխագուշակել ապագան»:

Նիս հուսակալան փիլիսոփա, անտիկ իդեալիզմի խոշորագույն ներկայացուցիչ Պլատոնը Պլատոն Աթենացի «խակական անանը Աթիստոլեն», ծնվել է արիստոկրատական ընտանիքում, գրքով 427-348 մ.թ.ա., աշակերտել Կրատիլոսին, այնուհետև հիմնականում Սոկրատեսին: Չալաժ Պլատոնի ստեղծագործական աշխատանքը շատ մեծ է մոտ 36 աշխատանք, որը լրիվությամբ հետևել է մեզ, սակայն հատուկ աշխատանք նվիրված հոգեբանությանը չկա, մինչդեռ նրա որոշ աշխատություններում շոշափվում են հոգեբանական հարցեր: Այսպես «Մենոն»-ում շարադրված են վերիւրերի թելորան, «Ֆեդոս»-ում տրված է հոգու կրոնական մեկնաբանությունը, «Թեետետոս»-ը նվիրված է հոգու մասին Հերակլիտի տեսության քննադատությանը, «Ֆեդոն»-ում ներկայացված է հոգու անմահության մասին տեսությունը, «Պետություն» աշխատության մեջ ընդգրկված է հոգու կառուցվածքի և այն մասերի բաժանման մասին Պլատոնի տեսությունը:

Ըստ Պլատոնի՝ մարդու հոգին կազմված չէ մարմնից: Նա գոյություն ունի մինչ օրգանիզմի ծնունդը և օրգանիզմի մահից հետո: Նա մի մարմնից կարող է տեղափոխվել մյուսը: Հոգու անմահության հիմնավորվածության համար Պլատոնը տալիս է 4 ապացույց: Առաջինը հիմնված է հակադրության սկզբունքի վրա: Ըստ Պլատոնի՝ աշխարհը լիքն է հակադրություններով՝ գեղեցիկ-տգեղ, բարի-չար, քուն-արթնություն և այլն: Մի շարք միջանկյալ վիճակների միջով մի հակադրությունը ծնվում է մյուսից, օր.՝ քուն-արթնացում-արթնություն, գեղեցիկ-միջշաղ-գեղեցիկ, գեղեցիկ-արշավույ-ցեղեցիկ և այլն: Նման ձևի էլ ծնվում է կենդանին մահացածից, իսկ մահացածը՝ կենդանիից: Այսպես, բարձր մարդու հոգուց անցման ժամանակ տեղի ունի կիսահոգևոր վիճակներ, որոնք առոխճանաբար ավելի սերտ կապվելով մարմնի հետ, բերում է այնպիսի որակների, որոնք մարմնի հետ կարող են քայքայվել:

Մահվան փոխարկումը կենդանացման տեղի է տնենում հոգու օգնությամբ: Որպեսզի կենդանի փոխարկումը մահվան և ընդհակառակը տեղի ունենա, պետք է, ըստ Պլատոնի, որ գոյություն ունենան մահացողների հոգիներ, միշտ պատրաստ մտնելու ծնվող մարմիններ: Նման դեպքում հոգին պետք է գոյություն ունենա մարմնի ծնվելուց առաջ և մահվանից հետո, այսինքն լինի մշտական և անմահ:

Հոգու անմահության 2-րդ ապացույցը կառուցված է վեբուշների թելորիայի հիմքի վրա: Պլատոնի կարծիքով մաքր բացահայտում է իրերի անանությունները և տարբերությունները առանց որևէ ուսուցման: Մաքրը գիտելիքները ձեռք է բերում ի չնայելի մասաբերման հոգու ի ծնն ընդունակությունների: Բայց մաքրու հոգին կալող է հիշել այն, ինչ նախկինում արդեն գիտեր: Դրա հետևաբ հոգին պետք է տիրապետեր գիտելիքներին մինչ այն, քանի դեռ չէր բնակվել մարմնում: Մինչդեռ դա հնարավոր չէր լինի, եթե հոգին գոյություն չունենար մինչև նրա բնակվելը ծնվող մարմնին: Եվ եթե հոգին գոյություն ունի մինչև մարմնի ծնվելը, ապա նա կարող է և պետք է գոյություն ունենա և մարմնի մահից հետո, որովհետ, ըստ էության, նա մշտական է և անմահ:

3-րդ ապացույցը հիմնված է հոգու և գաղափարների նույնականության մասին դրույթի վրա: Պլատոնը պնդում է, որ բոլոր բաղադրվածը, բարդը քայքայվում և մահանում է, քայքայման ենթակա չէ միայն հասարակը և ոչ բաղադրվածը: Այս տեսակետից մարմինը միշտ կա ինչ-որ տեսանելի, բաղադրված, փոփոխական, և որի համար նրան հատուկ է քայքայվելը և մահը: Ի հակադրություն մարմնի, մարդու հոգին և գաղափարները տեսանելի չեն, բաղադրված չեն, և անդասավորվելի, և որի համար նրանք ենթարկա չեն քայքայման և մշտական են: Եթե հոգին իմացության ժամանակ օգտվում է մարմնային օգգաբներից, նա չեղվում է իսկական ճանաչարից, դառնում հարթածի նման: Երբ նա իմանում է ինքնություն, ապա նա տանում է գաղափարների աստվածային աշխարհը, որտեղ ամեն ինչ հասարակ է, անբաժանելի, անտեսանելի և մշտական: Նշանակում է հոգին ազգական է աստվածայինին և նման նրան: Իսկ ինչ ասածոց է և նման նրան, ապա մշտական է և անմահ:

Աշխարհը, ըստ Պատոհմի, կառուցված է սցենարով, որ ողջ մարմնացիներ նվաճարվում է տատվածայինին: Նրբ հոգին բնակվում է մարմնում, ապա վերջինս սկսում է նվաճարվել նրան: Իսկ ինչ տեսնված է իշխելու և կառավարելու, ապա ոմնի աստվածային ծագում: Եվ բոլոր աստվածայինը մշտական է, որին մե և մարդու հոգին անմահ է:

Եվ վերջապես վերջին ապագույցը կայանում է նրանում, հառնաձայն որի հոգին իր մեջ ընգրկում է կյանքի սկիզբը: Տոգին, բնակվելով որևէ մարմնում, միշտ նրան կյանք է նվիրում: Եվ այն, ինչ կյանք է տալիս, նա մեծ չունի, այսինքն՝ մահկանացու չի կարող լինել: Վերանդից մարդու հոգին պետք է լինի անուշադանի և անմահ:

Բերված փաստերից տեսնում ենք, որ բոլոր նրանք ուղղված են մարմնից հեռու անկախության ինստիտյուններ: Մարդու մարմնից հեռու համար ժամանակավոր ապաստարան է: Նրա մնալու ինստիտյուն տեղը աստվածային բարձունքներն են, որտեղ նա ձևք է բերում հանգիստ մարմնային կրքերից և հաղորդակցվում գաղափարների աշխարհին: Բոլոր մարմնային հոգիներին վիճակված չէ հասնել աստվածային բարձունքներին: Նրանց հոգին, որոնք եղել են մարմնային բուսն օրհնություններ՝ անուշադան, գերին որոնք նվաճարվել են որկրափայլության կամ այլ մարմնային անախարկությունների, սերունդների միջով վերածնվում են կենդանիների հոգու՝ էշի, գայլի, ազգակի և այլնի մեջ: Գաղափարների աստվածային բարձունքներին մոտենում են միայն փիլիսոփաների հոգիները, քանի որ միայն նրանց է հատուկ համարյա լրիվ ազատվել մարմնային վերադարձից:

Տոգին, գտնվելով գաղափարների աստվածային աշխարհում, նրանից ստանում է գիտելիքների այն պաշարը, որը մատչելի է նրան՝ կախված անցյալ մարմնային ծանրաբեռնվածությունից: Այնուհետև իջնելով երկրի և մտնելով մարմին, հոգին լցնում է այն ամենը, ինչ նա գնել և ինչի հետ շփվել է գաղափարների աշխարհում: Նրա հետագա գործունեությունն ուղղված է միայն նրան, որպեսզի այդպես իր ակտիվացնի աստվածային աշխարհում ձևք բերած գիտելիքները, զբաղվի գաղափարների դիտարկմամբ և նրա էության մեջ թափանցմամբ: Ըստ Պատոհմի, այս գործունեության դիտարկում անցում է դիմել գզալանի օրգաններին կամ այլ մարմնային միջոցներին: Նրանք միայն արգելք, խոչընդոտ են ճշմարտության հասնելուն ճանապարհին: Մարդու մարմնից և նրա գզալանի օրգանները հազուս բերում են միայն հոգևոր, պահանջում ուշադրություն, հոգուն շնորհում իր ինստիտյուն իմացական գործունեությունից՝ մտաբերումից: Տոգին լավ է մտածում, նրբ նրան չեն անհանգստացնում ոչ տեսողությունը, ոչ լսողությունը, ոչ ցավը, ոչ հաճույքը: Առավել եր, գզալանի օրգանները մեզ ճշմարիտ գիտելիքներ չեն տալիս: Պատահող ցույց է տալիս այն, որ տեսնելով, օր, ուրիշ լեզվի բաներ, մարդ չի կարող հասկանալ նրանց իմացող, ստացվում է գզալությունը և ընկալումը արգելա աղբյուրի կամ, քայց ոչ մի գիտելիք նրանք մարդուն չեն բերում: Դրա համար ճշմարտությունը մատչելի է միայն բանականությանը, տիրապետողը «մարդու» գաղափարների կենդանացման ընդունակությունն է, որոնց հետ հոգին հանդիպել է գաղափարների աշխարհում, լինելով ազատ մահկանացու մարմնից:

Քանի որ մարդկային հոգիները նրանց մարմնային ծանրաբեռնվածության պատճառով տարբեր են գնել բարձր գաղափարները, ապա երկրի վրա եւ, մտնելով նոր մարմին, նրանք աստվածում են մարդկային հիմքերից նրանք ըստ բանականության: Տոգին աստվածային աշխարհում տեսնելով և ընդունելով բարձրագույն գաղափարների մեծ մասը, բնակվում են ընտանիքներ, որոնցում ծնվում է փիլիսոփա: Փիլիսոփայից հետո բանականության ընդունակությունների մակարդակով ստնում է թագավորի կամ թագավաճի, այնուհետև պետական գործի մեջ և այլն:

Մարդու մտո Պատոհմի ասանճացում է հոգու երկու մակարդակ՝ բարձր և ցածր: Բարձր մակարդակը ներկայացված է հոգու խելացի մասով: Նա անմահ է, անմարմին, հանդիսանում է իմաստության հիմքը և կատարում է ղեկավարող ֆունկցիա ցածր հոգու և ողջ մարմնի նկատմամբ: Խելացի հոգու ժամանակավոր ապաստարանը համարվում է գլխուղեղը:

Ցածր հոգին իր հիմքին ներկայացվում է երկու մասով կամ մակարդակով՝ հոգու ցածր առաքինի մաս և ցածր բուսն կրքերի հոգի: Առաքինի հոգին իր մեջ ընգրկում է աֆնելտիկ վիճակների և ծգուտի կրքերի բնագավառը: Նրա հետ կապված է կամքը, խիզախությունը, արիությունը և այլն: Տոգու այս մասը կարծես թե կատարում է կենդանիների հոգու պաշտպանող շան դեր: Նա ամբողջությամբ գործում է երկրի կամ հոգու բանական մասի թելադրանքով: Տոգու այս մասին բնորոշ է սերտ կապ մարմնի հետ, տեղադրվում է նա սրտի շրջանում: Բուսն կրքերի կամ ցածր հոգին ընգրկվում է պահանջմունքների, հալոսումների և կրքերի դրոսը: Տոգու այս մասը լինում է հոտի, որը բանական և առաքինի հոգու կազմից պահանջում է կառավարում: Բուսն կրքերի հոգու լոկալիզացիան լյարդն է:

Տոգու կառուցվածքը բերված պնմայից տեսնում ենք, որ Պատոհմը առանձնացնում է նրա երեք մակարդակ, որը անվանում ենք «հոգու կառք»: Տոգու երեք մասերի բաժանման հիման վրա Պատոհմը տալիս է անհատական բնագիտությունների դասակարգում, տարբեր ժողովուրդների բնագիտությունների, կառավարման ձևերի, հասարակության բաժանումը դասերի: Մարդիկ տարբերվել են հոգու այս կամ այն մասի գերակշռությամբ: Իմաստուններին և փիլիսոփաներին բնորոշ է բանական հոգին: Խիզախների մտո դավաճանո է առաքինի հոգին, մարմնային անախարկություններով մարդկանց մոտ առաջնային է բուսն կրքերի հոգին:

Բանախմբի հոգու գերակշռությունը, ըստ Պլատոնի, հատուկ է հոյեմեղին, առաքինի հոգու գերակշռությունը՝ կյուսիսի ժողովուրդներին, բուսն կրքերի հոգին՝ եգիպտացիներին և արևելքի այլ ժողովուրդներին: Դասերի հիերարխիան ևս կառուցվել է հոգեբանական սկզբունքով: Մեծ խելքի հատուկ է արիստոկրատներին, խիզախությունը՝ զինվորներին, կրքերը և հսկունքը՝ արհեստավորներին և սարուկներին: Այստեղից արվել է դեկավարման ձևի ենթադրություն: Իդեալական էր համարվում այն պետությունը, որը դեկավարում են արիստոկրատները, պահապանությունը վարում զինվորները, իսկ աշխատում և ենթարկվում արհեստավորները և ծառաները: Պետության մեջ զինվորական իշխանությունը բերում է թնապետության, իսկ ավելի վատ, երբ պետությունը գլխավորում է դեմոսը, որը բերում է անկարգության և քաոսի: Ըստ Պլատոնի պետության մեջ մարդիկ պետք է գրավեն իրենց տնդը համապատասխան իրենց ծառանգական նախադրյալների: «Նրա համար, ով իր բնական նախադրյալներով պիտանի է կռիվակարի, ճիշտ կլինի զբաղվի միայն կռիվակարությամբ և չբաղվի ոչնչով, իսկ ով պիտանի է հյուսնի թաղ զբաղվի հյուսնությամբ: Այս նույնը և այլ դեպքերում»:

Բայց միաժամանակ Պլատոնը մեծ նշանակություն է տվել և դատաիրարությանը: «Ճիշտ դատաիրարությունը և ուսուցումը մարդու մեջ արթնացնում են լավ բնական նախադրյալներ, որոնք նրանք մոտ արդեն կան: Ի շնորհիվ լավ դատաիրարության նրանք դառնում են ավելի լավ և ավելի, նաև իրենց սերունդներին փոխանցելու իմաստով», - գրված է «Պետության» մեջ: Պլատոնի մտքերը դատաիրարության մասին հիպոթեզների գնահատականի արժանացավ Ռուսայի սոսո: Ռուսոն գրել է. «Յանկանում եր ատանալ հասարակական դատաիրարության մասին հասկացությունը - ընթերցեք Պլատոնի «Պետությունը»: Դա ոչ թե քաղաքական ստեղծագործություն է, ինչպես մտածում են որոշները դատելով գրքի մասին վերնագրով, դա փայլուն, որը միայն կազմվել է - իդեալիստ է դատաիրարության մասին»:

Պլատոնին հաջողվեց ցույց տալ, որ բանականությունը ընդհանուր նշանակալից կատեգորիաների, գաղափարների և հասկացությունների համակարգ է: Մինչդեռ այս հասկացությունների էությունը բացահայտվել է իդեալիստական ձևով: Հասկացությունները վերագրվել են գաղափարների անկողմնային աշխարհին, գոյություն ունեցող դրսից և անկախ իրերից ու մարդուց:

Ամփոփում

Ցանկացած գիտական աշխատանք ենթարկում է անգլայի մասին ինֆորմացիա ունենալու անհրաժեշտության: Եվ դիմումը պատմությանը Յարոշևսկին անվանում է «առեղծագործական երկխոսություն անգլայի հետ»: Դիմումը պատմությանը հոգեվարքի մասին գիտելիքների ծագման ու զարգացման վերլուծություն է և պատմության տիրապետումը չի ասանանախակվում անգլայի տեղաբնակների վերադարձությանը, այլ պետք է ծառայի ներկային ակտուալ պրոբլեմի լուծման նպատակով: Անտիկ շրջանի մտածողների տեսությունների իմացությունը անհրաժեշտ է ժամանակակից գիտության զարգացման և իմացության համար: Եվ ինչպես նշել է 15-րդ դարի իտալացի փիլիսոփա-հումանիստ Լորենցո Վալլան՝ «Պատմությունը առավել օգտակար է, այն լիքն է իմաստությամբ»: Նա մեզ ծանոթացնում է գիտության մարդկանց կյանքի հետ, բացահայտում է հետմյալ ճյուղային պայքարի ողջ դրամատիզմը, առաջ բերում տարբեր գգացմունքներ՝ հիպոստեզիսի միջև իմացաբաղկություն:

Резюме

Любая научная работа включает в себя необходимость наличия информации о прошлом. Обращение к прошлому Ярошевский назвал “Мудрым диалогом с прошлым”. Обращение к истории - это анализ знаний о - создании и развитии психики. Изучение истории не ограничивается воспронведением прошлых мыслителей, оно должно служить решению нынешних актуальных проблем. Знание идей античных мыслителей нужно для развития современной науки. Итальянский философ-гуманист Лоренцо Валиа в XV-ом веке заметил. “История более полезна, она полна мудростью”. Она знакомит нас с жизнью людей науки, раскрывает весь драматизм борьбы за справедливости.

Գրականություն

1. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ, 9, Ե., 1983 թ.:
2. Արևշատյան Ս.Ս., Պլատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակ, Բ.Մ.: 1971, Բ.10:
3. Аревинатян, Формирование философской науки в древней Армении, Е, 1973.
4. Аревинатян С.С., Платон и его эпоха (к 2400 летию со дня рождения), М., 1979.
5. Ярошевский, История психологии.
6. Ждан А.И., История психологии (от античности до современности), М.
7. Якушин В.А., История психологии, Санкт-Петербург: 1998.

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՍՏԱՆԵԼԻ ԲԱՐՁՈՒՆԸ (Հրաչյա Աճառյանի ծննդյան 130-ամյակի առթիվ)

Ա.Յու. Սարգսյան

հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Գիտնականներ կան, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել գիտության տվյալ բնագավառի յիստություններին ու առաջընթացը: Հայ իրականության մեջ այդպիսի գիտնականներից է Հրաչյա Աճառյանը, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է մայրենի լեզվի ուսումնասիրությանը՝ ճանապարհի հարթելով հայությունը լեզվաբանների համար:

Հրաչյա Հակոբի Աճառյանը ծնվել է 1876թ. մարտի 8 (20)-ին Կոստանդնուպոլսում: Նախնական և միջնակարգ կրթությունը ստացել է տեղի Արամյան (1883-1885), Ս.Սահակյան (1885-1889) և Լեոդոնական (1889-1893) վարժարաններում՝ աշակերտելով Հ. Պարոնյանին, Ե. Տնայրճիսյանին, Մ.Չերազին, Գ.Արվանձյանին և Ժամանակի հայտնի այլ մտավորականների ու մանկավարժների: Երկու տարի ուսուցչություն անելով Պոլսում և Կարինում՝ ապագա նշանավոր հայագետը 1895 թվականին մեկնում է Փարիզ՝ ուսումը շարունակելով Սորբոնի համալսարանում և Արևելյան կենդանի լեզուների դպրոցում, որտեղ աշակերտում է մի շարք լեզվաբանների, հատկապես նշանավոր հայագետ և հնդեվրոպաբան Անտուան Մելին, որն էլ նրա կյանքում բախտորոշ դեր է կատարում: Այստեղ նա ծանոթանում է տարբեր լեզուների և լեզվաբանության տարբեր բնագավառների: 1897 թվականին Փարիզում կայացած հայագիտական 11-րդ կոնգրեսում հայագետ Հյուբշմանը, լսելով Աճառյանի երկու զեկուցումները՝ աշտնջ լինելով վերջինիս՝ Փարիզի լեզվաբանական ընկերությանը ներկայացրած լազերենի ուսումնասիրությանը, հրավիրում է նրան Սոյասքաբո՝ լսելու իր դասախոսությունները հայերենի ծայնաբանությունից: Խորհրդակցելով Մելինի հետ և ավարտելով ուսումը Փարիզում՝ Աճառյանը մեկնում է Սոյասքաբո և մի քանի ամիս աշակերտելով Հյուբշմանին ու լրացնելով լեզվաբանական կրթությունը՝ նույն թվականի առաջին վերադառնում Կովկաս և շարունակում ուսման պատճառով ընդհատված մանկավարժական գործունեությունը: 1898-1902թթ. նա որպես ուսուցիչ աշխատում է Էջմիածնում, 1902-1904թթ. Շուշում, 1904-1906 և 1920-1923թթ.՝ Թավրիզում, 1906-1907թթ.՝ Նոր Բայազետում, 1907-1919թթ.՝ Նոր Նախիջևանում, 1919-1920թթ.՝ Թեհրանում՝ տարբեր տարիների դասավանդելով հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հին և մատենագրության պատմություն, հայ նոր գրականության պատմություն, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, հայկազգայնություն: 1923թ. արդեն մեծ ճանաչում ստացած գիտնականն ու մանկավարժը Թավրիզից հրավիրվում է Երևան՝ դասախոսելու նորաստեղծ պետական համալսարանում, որտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջին օրը՝ 1953թ. ապրիլի 16-ը, դասավանդում գրաբար, ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն, լեզվաբանության ներածություն, համեմատական քերականություն, արևելյան լեզուների և արևելքի պատմություն, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն իր գիտելիքները, գիտական և մանկավարժական հարստ տիրույթ ի սպաս զննելով լեզվաբանական տարբեր բնագավառների հետագա զարգացմանը, մեծապես նպաստելով գիտական բարձրորակ կադրերի պատրաստմանը, որոնցից շատերը, շարունակելով մեծ ուսուցչի ավանդները, դարձան այդ բնագավառի ուսուցատարները:

Աշխարհափառ լեզվաբանի գիտական և մանկավարժական ծառայությունները գնահատվել են ըստ արժանվույթ: 1897թ. լազերենի ուսումնասիրության համար նա ընտրվել է Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, 1937թ.՝ Հիստորիո-լեզվաբանական ինստիտուտի գերանական բաժնի թղթակից անդամ, 1943թ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Թեհրան այդ ամենից վեր է այն չխամրող սերն ու հարգանքը, որ ունի հայ ժողովուրդը իր արժանավոր գավառի հանդեպ:

Առավել բեղմնավոր է գիտնական Աճառյանի գործունեությունը, որի անկապտելի մասն է կազմում բարբառագիտությունը: Մեծ հայացմոյի բարբառագիտական գործունեությունը սկսվում է աշակերտական տարիներից՝ ուղեկցելով նրան մինչև կյանքի վերջին օրերը: Այդ գործունեությունը ծավալվում է երեք հիմնական ուղղություններով՝ բառերի հավաքում, հայերեն բոլոր բարբառների տեղի, դիրքի և հիմնական հատկանիշների որոշում, բարբառային միավորների յիստատա

նկարագրություն: Դեռևս աշակերտական տարիներին նա կազմում է մայրենի Կ.Պոլսի բարբառ բառարանը, որին հաջորդում է դասընկերների օգնությամբ հայերենի գրվածական բառերի հավաքագրման աշխատանքը: 1902 թ. հրատարակվում է բառարանագրական առաջին աշխատությունը՝ «Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ» վերնագրով, որը պարունակում է թուրքերենից, ինչպես նաև թուրքերենի միջոցով պարսկերենից, արաբերենից և այլ լեզուներից հայերենին անցած շուրջ 4200 բառ, որոնք գործածվում են Կ.Պոլսի, մասամբ նաև Նոր Նախիջևանի, Վանի և Ղարաբաղի բարբառներում: Աշխատության մեջ գույց են տրվում թուրքերենից փոխառյալ բառերի ծագումը, ֆոնաներեն համարժեքը, հայերենում գործածության սահմանները ասանձին նշաններով առանձնացնելով միայն հին սնդուկներին հատուկ, հայերեն համապատասխան ձև ունեցող բառերը և նոր փոխառությունները: Բառարանին կցված ընդարձակ ներածականում հեղինակը ներկայացնում է թուրքական տիրապետության պատմությունը, հայ բարբառների դասավորությունն ու ազդեցությունը ըստ թուրքերենի ազդեցության աստիճանի առանձնացնելով երեք խումբ. ա) ամբողջապես թրքախոս հայեր, բ) չի թրքախոս հայեր, բայց որոնց բառապաշարում զգալի տեղ են գրավում թուրքական բառերը, գ) բարբառներ, որոնց մեջ այդ կարգի բառերի թիվը համեմատաբար նվազ է: Մոմեն սկզբունքով է կազմված «Եվրոպական փոխառյալ բառեր հայերենի մեջ» բառարանը, որը թեև պատրաստ էր 1921 թ., սակայն տպագրվեց նախ «Հանդես ամսօրյայի» 1947-1950 թթ համարներում և ապա առանձին գրքով (Վիեննա, 1915): Այստեղ ընդգրկված է Պոլսի, ինչպես նաև Արաբկիթի, Ջուրտնիսի, Վանի, Ղարաբաղի և որոշ այլ բարբառներում գործածված 860 բառ, որոնք փոխառություններ են իտալերենից, ֆրանսերենից և հիթալական այլ լեզուներից:

Աճառյանի հաջորդ բառարանագրական աշխատությունը «Գավառական բառարան» է (Թիֆլիս, 1913), որի կազմման աշխատանքը սկսելով դեռևս 1890-ական թվականների սկզբին Պոլսի Կեդրոնական վարժարանում ուսանելու տարիներին, և հիմք ընդունելով Ա.Չալաբյանի Պոլսի բարբառի մի քանի հարյուր բառերի բառացանկը հնտագայում հարստացրել է այն գրավոր բազմաթիվ աղբյուրներից և ուսուցչական գործունեության ճանապարհորդությունների ընթացքում հավաքած հազարավոր օրինակներով: Բառարանը պարունակում է շուրջ 30000 բառ ու դարձվածային սիմվոլ, որոնք հեղինակի վկայությամբ «հին մատենագրությամբ ավանդված չեն. կամ ավելի պարզ խոսվելով՝ Վենետիկի աճածոն բառարանին մեջ չկան»¹: Բառարանում տեղ են գտել նաև հին մատենագրությամբ վկայված այն բառերը, որոնք հայերենի բարբառներում առբերել իմաստներ են ձեռք բերել, ինչպես նաև օտար և սնվական բաղադրիչներով կազմված բաղադրությունները: Յուրաբանցյուր գաղափարական լատի մոտ նշվում է նրա գործածման վայրը, որոշ բառերի համալս՝ նաև աղբյուրը, բառերի իմաստները հաստատելու համար բերվում են օրինակներ, իսկ որոշ դեպքերում կատարվում են բառակազմական և ստուգաբանական վերլուծություններ: Բառարանն ունեցավ լեզվաբանական, պատմական, ազգագրական խոշոր նշանակություն: Նրա շնորհիվ հազարավոր բառեր, փրկվելով կորստից, մտան շրջանառության մեջ. իսկ դրանց մի մասը մուտք գործեց գրական հայերենի բառապաշարը:

Բացի գավառական և փոխառյալ բառերից Աճառյանը հավաքել է հին մատենագրությամբ ավանդված բառերի բարբառային ձևերը, որոնք տեղ են գտել «Հայերենի արմատական բառարանում»:

Մեծ բարբառագետը բառարանագրական աշխատանքներին զուգընթաց զբաղվում է հայերենի բարբառները ուսումնասիրելու բարդ ու աշխատատար առաքելությամբ՝ ծավալում մենագրական ուսումնասիրությունների նյութ դարձնելով մեկ տասնյակից ավելի բարբառներ: 1898թ. տպագրվում է «Բնագրություն Այսլանքի բարբառին» ուսումնասիրությունը, որն արժանանում է նշանավոր եռյապետներ Մելիքի, Վյուքմանի, Լ.Մանթյանի, Գ.Լավաթյանի ուշադրությանը և խրախուսանքին, և որին հետևում են Սուլալյայի (1899), Ղարաբաղի (1899-1901), Նոր Նախիջևանի (1925), Մարաղայի (1926), Նոր Զուղայի (1940), Կ.Պոլսի (1941), Հայնենի (1947), Վանի (1953), Աստուլի (1953), Կիլիկիայի (2003) բարբառներին նվիրված մենագրությունները: Այս և այլ բարբառներից տարիներ շարունակ հավաքած բարբառագիտական նյութերի հետազոտությունների ամփոփումը հանդիսացավ 1909թ. Փարիզում ֆրանսիացի լեզվով տպագրված «Հայերեն բարբառների դասակարգությունը» աշխատությունը, որը լրացված և վերանայված վերահրատարակվեց հայերեն «Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների՝ բարբառագիտական քարտեզով» խորագրով (1911): Այս

աշխատությունը հայ բարբառագիտության առաջին ընդհանրացնող ուսումնասիրությունն է. որով հայ բարբառագիտությունը հիմնադրվեց որպես հայերենագիտության ինքնուրույն բնագավառ և մտավ ուսումնական ծրագրերի մեջ: Աշխատության ներածական բաժնում հեղինակը ներկայացնում է հայերեն բարբառների ուսումնասիրության վիճակը, բարբառագիտական ուսումնասիրությունների համառոտ պատմությունը, բարբառագիտական ուսումնասիրությունների ծրագիրը, գիտական այբուբենը, ուսումնասիրության նդանակները, աշխատության կազմությունը և այլ հարցեր: Այնուհետև հանգամանորեն ներկայացվում են հայ բնակչության տարածման սահմանները, հայկական բոլոր գաղթօջախները, ինչպես նաև այն բնակավայրերը, որտեղ հայերը իրացել են մայրենին՝ դառնալով օտարախոս: Աշխատության թուն նպատակը հայ բարբառների բնիկատուր դասավորությունն է, որանց սահմանների հնչյունաբերականական կարևոր հատկանիշների որոշումը: Հստ Աճառանի՝ աշխարհագրական դասակարգումը չի բացահայտում հայերեն բարբառների բնութագրերը, չի ներկայացնում տարբեր բարբառավանդների ստանձնահատկություններն ու բնորոշ հատկանիշները: Ահա թե ինչու նա քննության է առնում բարբառների դասակարգման հիմունքի խնդիրը՝ գտնելով, որ դասակարգման գլխավոր հիմունքը պետք է բացահայտի բարբառների լեզվաբանական հատկանիշները, իսկ այդպիսի կարող են լինել կամ հնչյունաբանական հատկանիշները, կամ բառային, կամ էլ քերականական առանձին իրողություններ: Աճառանն ընտրեց քերականական-ձևաբանական դասակարգումը, որը բացահայտում է բարբառների էական տարբերություններն ու ընդհանրությունները և հնարավորություն է տալիս բազմաթիվ բարբառները միավորել մի քանի խմբերի մեջ: Իբրև ձևաբանական դասակարգման հիմնական հատկանիշ՝ նա ընտրեց բայի սահմանական նդանակի ներկայի և անցյալի անկատարի կազմությունը, որին հիմնականում գուցադրվում է նաև ներգոյականի, մասամբ նաև թացառականի կազմությունը: Այս սովորույթով էլ նա իրեն հայտնի բոլոր բարբառները բաժանեց *-ում*, *-կը* և *-ել* ճյուղերի, որոնցից *-ում* ճյուղի մեջ մտնող բարբառները սահմանական ներկան և անցյալի անկատարը կազմում են *-ում* վերջավորությամբ դերբայով, *-ել* ճյուղի մեջ մտնողները՝ *-ել* վերջավորությամբ դերբայով, իսկ *-կը* ճյուղի մեջ մտնողները՝ *-կը* նախադր մասնիկով: Դրանցից *-ում* ճյուղին հատկացվեց 7, *-կը* ճյուղին 21, *-ել* ճյուղին՝ 3 բարբառ: Գիտականորեն լուծելով հայ բարբառների դասակարգման խնդիրը և տալով բարբառների դասակարգումն ու խմբավորումը՝ Աճառանն այնուհետև ներկայացնում է բարբառների ընդհանուր հնչյունաբանությունը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով բարբառների այն հնչյուններին, որոնք չկան գրական հայերենում և գրաբարում: Աշխատության մեծ մասը նվիրված է հայերեն բարբառների նկարագրությանը: 31 բարբառներից յուրաքանչյուրի նկարագրության մեջ նշվում են աշխարհագրական վայրը, բնակչության վիճակագրությունը, այդ բարբառին հարող բնակավայրերի անունները, նկարագրվում հնչյունաբանական և ձևաբանական կարևոր իրողությունները: Վերջում տրվում են նմուշներ 102 խոսվածքներով: Աշխատությանը կցված է 337 հայաբնակ վայրեր ընդգրկող «Հայոց խոսած լեզուներու և բարբառներու քարտեզը», որտեղ առանձին պայմանական նշաններով ցույց են տրվում բնակավայրի խոսվածքի ճյուղային պատկանելությունը, շրջակա լեզուների և հայերենի տարածման սահմանները: «Հայ բարբառագիտության» ամփոփ շարադրանքն է կազմում «Հայոց լեզվի պատմություն» նրկորդը հատուրի «Հայերենի բարբառները» գլուխը, որտեղ բարբառների դասակարգման հարցի մասին խոսվում է պլիկի հանգամանորեն, քննվում են նոր բարբառներ, կատարվում որոշ փոփոխություններ ու ճշտումներ, իսկ «Ե դարի հայերեն բարբառները» և «Հայ բարբառների ծագման ժամանակը» գլուխները նվիրված են պատմական բարբառագիտության հարցերի քննությանը: Նման անդրադարձ է կատարվում «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմախառոր աշխատության մեջ, որտեղ քննության նյութ են դարձել մինչ այդ չուսումնասիրված բազմաթիվ խոսվածքներ:

Մեծ լեզվաբանը ուսումնասիրել է նաև բարբառախոս հայ մասնիկների լեզուն ներկայացնելով 11 խոսվածքներում գործածվող 280 բառ, որանց կազմությունն ու ծագումը, մասնիկների լեզվի հնչյունաբերականական առանձնահատկությունները:

Աճառանը դեռևս Փարիզում ուսանելու ժամանակ փորձառական հնչյունաբանության հիմնագիր Ռոսյոյի լաբորատորիայում ստանբեկցի, նույնցի, չույնցի, սնքստագի, մշնցի բարբառախոսների և իր անձի վրա փորձառական մեթոդով ուսումնասիրության էր ենթարկել համապատասխան բարբառների հնչյունաբանությունը, ծանոթ էր ֆրանսերենին

ունենալով ուսումնասիրել բոլոր հայ բարբառները առ տեղատեղ, բայց նյութական միջոցներին գուրկ լինելով, որոշեցի շարունակ վռնել պաշտոնագրաբան»¹։ Այդպիսի շուրջ 40 բարբառներից և հայրուրից ալիքի խառվածքներից հավաքած հայրուստ նյութը և ուսումնասիրությունները, որանք ուղեկցող հանդիսացան հետագա բոլոր ուսումնասիրողների համար։

Աճառյանի հանճարը առավել խորությամբ դրսևորվեց «Հայերենի արևմտական բառարանում», որը հեղինակի շուրջ քառասուն տարվա տրեւան աշխատանքի արդյունքն է՝ դարագլուխ կազմող մի երևույթ, որի մտափն հիացմունքով են խառնել նշանավոր շատ հայագետներ, այդ թվում՝ Անտուան Մեյեն և Նիկոլայա Մալո։ Բառարանը պատրաստ էր այդքան 1922 թվականին, սակայն տպագրվեց 1927-1935թթ.՝ արավետիկ եղանակով, յոթ հատորով, իսկ հետագայում հրատարակվեց (1971-1979)՝ չորս հատորով։ Սկսած 19-րդ դարի 70-ական թվականներից՝ հայոց լեզվի բառարանների ստուգաբանությամբ զբաղվել են բազմաթիվ նշանավոր հայագետներ՝ Լազարյան, Հյուբշմանը, Մեյեն, Պեղերսենը, Լիզենը, Պետրուսյանին, Պետերսենը և ուրիշներ, և արդեն 19-րդ դարի վերջին հայերենի ստուգաբանված բառերի թիվը անցնում էր նրեք հազարից։ Հիմք ընդունելով այդ ամենը՝ Աճառյանը «Արևմտական բառարանում» ընդլայնեց 10996 արմատից ներկայացրեց 5095-ի ստուգաբանությունը, որից 1668-ը անհայտ է իր ստուգաբանած բառերն են։ Բառարանի յուրաքանչյուր բառահոգված բաղկացած է 1) Բառագիտություն, 2) Ստուգաբանություն, 3) Ստուգաբանությունների պատմություն, 4) Գաղափարական բառեր, 5) Հայերենից փոխառյալ բառեր բաժիններից։

Առաջին բաժինը փաստորեն բառարանտի բառագիտական, իմաստաբանական, բառակազմական բազմակողմանի ուսումնասիրությունն է՝ հնչյունափոխական օրինաչափություններով և հնչյունական տարբերակներով հանդերձ։ Այստեղ իբրև գլխաբառ ընդլայնվում է հայերեն արմատը, որից հետո տրվում են նրա ընթակաճական ձևերը, իմաստը, բառիմաստի գրագեղանքի փոփոխ, գործածությունը հնագույն վկայությունները, այդ արմատից կազմված կտրուր բառերը, արմատի տարբեր գրությունները։ Օրինակները իմաստաբանում ընդլայնվում են V դարի մանրագրական շրջանի գրավանությունից։ Բառարանի բուն լեզվաբանական մասը կազմում է բառահոգվածի նրկաբոլ բաժինը, որտեղ տրվում է արմատի ստուգաբանությունը։ Նախ ընդլայնվում է հնդեվրոպական մասյուն ձևը, այնուհետև նրանից առաջացած համապատասխան ձևերը զննակից լեզուներում։ Յուրաքանչյուր լեզվից վկայություններ ընդլայնվում է, թե ինչ նշանակություն ունի արմատն այդ լեզվում և ինչով է այդ նշանակությունը կապվում հայերենի հետ։ Եթե արմատը փոխառյալ է, նշվում է փոխառող լեզուն, այդ լեզվում բառի գրությունը և իմաստը։ Բառահոգվածի վերջում հիշատակվում է տվյալ արմատի ստուգաբանությունն առաջին անգամ առաջարկված հնդեվրոպի անունը և նշվում աղբյուրը։ Երբոր բաժնում ներկայացվում են շատուգաբանված և ոչ հավաստի ստուգաբանություն ունեցող արմատները, նշվում առաջարկված բոլոր ստուգաբանությունները, դրանց հնդեվրոպիները և աղբյուրները, այլ կերպ առած՝ սցս բաժնում ամփոփվում են բառաբանական և ստուգաբանական բոլոր փորձերը հայ կամ օտարագրի հնդեվրոպիների կողմից՝ V դարից մինչև բառարանի հրատարակության ժամանակը։ Չորրորդ բաժնում տրվում են բառի կամ բառարանտի համապատասխանությունները հայերենի 30 բարբառներում, դրանց հնչյունական տարբերակները, իմաստային ու բառակազմական փոփոխություններն ու ձևափոխությունները։ Մատնագիտությամբ ավանդվում էլ շարք անտույց բառերի ու ձևերի իմաստը բացահայտվում է հենց բարբառային տվյալներով²։ Հիմնըորդ բաժնում քննվում է հայերենի ազդեցությունը այլ լեզուների վրա։ Այստեղ հնդեվրոպի ամփոփում է իր և ուրիշ գիտնականների ուսումնասիրությունների արդյունքները՝ հայերենից այլ լեզուներին անցած բառերի մասին։

1942-1962թթ. տպագրվեց հայ բառարանագրության ևս մեկ գլուխգործոց՝ «Անձնանունների բառարանը»՝ հինգ հատորով, որն իրավամբ կարելի է համարել «արմատականի յուրովի շարունակությունը»³։ Այն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև XV դարը հայոց պատմության մեջ գործածված բոլոր անձնանունները, որ կրել են հայերը, իսկ XV դարից հետո առնված են միայն պատմական և գրական նշանավոր անձների անունները։ Բառարանը փաստորեն ստեղծված է բանասիրական-լեզվաբանական և պատմական-համընթացական սկզբունքների

համալրմամբ, որտեղ ներկայացվում են հայերեն անձնանունների լեզվաբանական-ստուգաբանական և պատմական-կիրառական բազմադրամանի և մանրամասն տվյալներ ու բնութագրումներ: Յուրաքանչյուր անվանը հատկացված է երկու բաժին, որոնցից առաջինում որպես գլխաբառ տրվում է անձնանունը, նրա ծագումը կամ ստուգաբանությունը, այդ անվան փառաքական և ժողովրդական ձևերը: Եթե անունը օտար է, ներկայացվում են նաև նրա համապատասխան ձևերը մի քանի լեզուներով, ինչպես նաև այդ անունը կրող նշանավոր դեմքեր օտար լեզուներից և ժողովուրդներից: Երկրորդ բաժնում ժամանակագրական կարգով բերվում են այդ անունով հիշատակված անձնավորությունները, տրվում նրանց սնվում և ամփոփ կենսագրությունը (եթե կան համապատասխան տեղեկություններ) և այն բոլոր աղբյուրները, որտեղ հիշատակված է այդ անձը: Հեղինակը առավել մանրամասն է գրում նրանց մասին, ովքեր պատմական դեմքեր են՝ գրող, պետական, հասարակական, գիտական գործիչ, գիտնական և այլն: Այսպես Գրիգոր անունը գրականության մեջ հիշատակվում է 745 անգամ: Յուրաքանչյուրի մասին առանձին խոսելով՝ Աճառյանը ընդարձակ հատվածներ է հատկացրել Գրիգոր Լուսավորչին, Գրիգոր Նարեկացուն, Գրիգոր Տղային և այդ անունը կրող այլ նշանավոր դեմքերի:

Աճառյանի հաջորդ խոշոր ուսումնասիրությունն է «Հայոց լեզվի պատմությունը» (I մաս, 1940, II մաս, 1951): Առաջին մասի առաջին գլխում («Նդեվրոպական նախաշրջան») ամփոփվում են հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության բնագավառում շուրջ մեկ դարի ընթացքում ձևեր բերված արդյունքները և ներկայացվում «հնդեվրոպացիների» մշակույթի, հնդեվրոպական նախալեզվի ու «նախահայրենիքի» ընդհանուր նկարագիրը: Այնուհետև քննվում են հայերենի ու ցեղակից լեզուների բառային ու հնչյունաքերականական ընդհանրությունները, ինչպես նաև լեզվի պատմական գաղափարն ընդհանուր խնդիրներ: «Հնդեվրոպական բարբառները և հայերենի դիրքը նրանց միջև» գլխում բերվում է հայերենի հնդեվրոպական բառերի (713 բառ) ցանկը՝ նախալեզվյան և ցեղակից ինքնուրույն համապատասխան ձևերի նշմամբ, որից հետո դրանք դասակարգվում են ըստ զբաղմունքային բնագավառների: Դրանց հիման վրա մեծ լեզվաբան ընդհանրում է հայերի նախնական քաղաքակրթության մակարդակը, զբաղմունքը՝ որոշելով նաև ցեղակից լեզուների շարքում հայերենի դիրքը և մերձավոր առնչությունները: Հաջորդ գլուխներում պատմական հաջորդականությամբ ներկայացվում են հայերենի, թրակերենի, փյուրգերենի, փոքրասիական լեզուների, խալդերենի, միտաներենի, Հայաստանի այլ բնիկների և կովկասյան լեզուների, իրանական, հռոմեական, ասորական աղեղնությունները հայերենի վրա: Երկրորդ գրքում ներկայացվում են հունարենից, եբրայերենից, արաբերենից, վրացերենից, թուրքերենից, իհն և նոր եվրոպական լեզուներից, ռուսերենից կատարված փոխառությունները: Յուրաքանչյուր նման աղեղնություն ներկայացնելուց առաջ հեղինակը տալիս է պատմական տեղեկություններ այն պայմանների ու հարաբերությունների մասին, որոնց հետևանքով կատարվել են այդ փոխառությունները: Բերվում են նաև փոխառյալ բառերի ամբողջական ցանկերը և դասակարգվում դրանք ըստ զբաղմունքային բնագավառների: Երկրորդ գրքում հեղինակը առանձնաձևի ուշադրություն է դարձրել գրաբարի զարգացման տարբեր շրջաններին, միջին հայերենին, աշխարհաբարին, հայերենի բարբառներին՝ լեզվական հարստ փաստերով նկարագրելով հայերենի՝ պատմական երկարատև ժամանակաշրջանում կրած փոփոխությունները:

«Հայոց լեզվի պատմություն» մեջ Աճառյանը քննության չի առնում պատմական քերականության հարցերը՝ ընթերցողին զգուշացնելով, որ քերականության պատմությունը թողնում է առանձին և հարգամանալից քննության: Այդ քննությունը նա կատարեց «Լեզվատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատության մեջ: Հատորների հերթականության խախտումով երկրորդ հատորն է կազմում «Ներածությունը» (1955), որը քաղկացած է երկու մասից՝ «Լեզվաբանության ներածություն» և «Լեզուների դասակարգությունը»: Առաջին մասում Աճառյանը քննության է առնում լեզվաբանության այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝ լեզվի բնույթը, ծագումը, փոխանցումը, էվոլյուցիան, հատկությունները, հասարակական, հոգիքանական և բնաբանական կոդները, երկրորդ մասում քննության են առնվում լեզուների ցեղակցությունը, լեզվաբնութանիքները և նրանց բնույթը, լեզուների վիճակագրությունը և դասակարգումը, նախալեզուների վերականգնումը, ընդհանուր նախալեզուն:

Մյուս հինգ հատորներն ունեն միատևական կառուցվածք: Դրանցից յուրաքանչյուրում քննվում են մեկ կամ մի քանի խոսքի մասեր. ինչպես նաև խոսքի մասերի որոշ ընդհանրություններ: Առաջին հատորում (1952) քննության են ենթարկվում ածականը և թվականը, երկրորդում (1954)՝ դերանունը, երրորդում (1957)՝ գոյականը, չորրորդում (Ա գիրք. 1959, Բ գիրք, 1961 թ.)՝ բայը, հինգերորդում (1965)՝ դերբայը, նախդիրը և նախադրությունը, մակբայը, շակվապը, ձայնարկությունը: Վեցերորդ հատորում (1971) հեղինակը ներկայացնում է ձայնախոսությունը և ձայնախոսությունը:

Ամեն մի խոսքի մասի ուսումնասիրությունը սկսվում է ընդհանուր ներածական տեսությամբ տվյալ խոսքի մասի վերաբերյալ, այնուհետև առաջին հատվածում ներկայացվում է լեզվական տվյալ իրողության, տվյալ երևույթի ընդհանուր լեզվաբանական քննությունը՝ 562 լեզուների տվյալների հիման վրա: Հաջորդ հատվածը համեմատական լեզվաբանական հետազոտություն է հնդեվրոպական լեզվաբանության շրջանակներում: Երրորդ հատվածում, որը նվիրված է հայերենի համեմատական քերականությանը, նախ նկարագրվում է տվյալ երևույթը հնդեվրոպական նախալեզվում և նրա զարգացումը ցեղակից լեզուներում, որից հետո այդ իրողության զարգացումը հայերենում մինչև V դարը: Ուսումնասիրության վերջին հատվածը հայերենի պատմական քերականությունն է:

Հայ մեծ լեզվաբանը իր ուսումնասիրություններին գուրնթաց ողջ կյանքի ընթացքում զբաղվել է մատենագրությամբ՝ նախանձելի հմտությամբ ու պարտաճանաչությամբ տասնյակ գիտական աշխատությունների մեջ ներկայացնելով նաև խնդրո հարցի շուրջ մինչև այդ եղած գրեթե բոլոր ուսումնասիրությունները: Պատահական չէ, որ նա համարվում է «առնչամատենագետ լեզվաբան»⁶ հայ լեզվաբանության մեջ: Մատենագիտական տեղեկատվությունը Աճառյանի ուսումնասիրություններում արտահայտվում է մատենագիտական հղումների, տեղեկությունների, գրականության գանկերի ձևով: Մատենագիտական հղումներով գերիազնված է «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմախտոյալը, որի էջերում վկայաբերվում են շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հայերենի համեմատական ու պատմական քերականությանը նվիրված ուսումնասիրություններն ու բազմաթիվ ուսումնասիրողների կարծիքները, իսկ ներածության մեջ շարադրվում են ուսումնասիրվող հարցերի մասին եղած տեղեկությունները, վեր հանվում դրանց արժանիքները ու թերությունները: Այդ տեսակետից ուշագրավ են նաև «Հայոց անձնանունների բառարանը» և «Հայերենի արմատական բառարանը», որոնցից առաջինին կցված է շուրջ 340 նյութից բաղկացած մի ընդարձակ գանկ, չնայած օգտագործված տվյալի և ձևազվի աղբյուրների թիվը մի քանի անգամ գերազանցում է դրան, երկրորդում ընդգրկված են շուրջ 1200 համառոտագրություններ, որոնցով նշված են միայն օգտագործված գրքերի և պարբերականների, իսկ արմատների մեկնաբանության «Մոտղաբանությունների պատմությունը» բաժնում զետեղված են դարերի ընթացքում արված բոլոր ստուգաբանական քննությունները և նույնիսկ դիտողությունները:

Մի շարք ուսումնասիրություններում օգտագործված աղբյուրների մասին տրվող տեղեկությունները վեր են ածվում մատենագիտական տեսությունների: Նման քննությունն «Գավառական բառարաններու պատմական» հատվածը «Հայերենի գավառական բառարանի» առաջաբանում, «Հայ բարբառագիտության պատմությունը» հատվածը «Հայ բարբառագիտություն» աշխատության ներածականում, ինչպես նաև «Հայոց գրերը» (1984) աշխատության առաջին մասը՝ «Աղբյուրներ և նրանց քննությունը» խորագրով: «Մատենագիտություն» վերնագրով առանձին բաժիններ ունեն Աճառյանի բարբառագիտական մի շարք մենագրություններ, իսկ որոշ աշխատություններ օժտված են առանձին գլուխների կցված աղբյուրների գանկերով:

Ընդհանուր առմամբ այնտեղ է առել, որ շարունակելով հայ դասական բանասիրության, հատկապես Մխիթարյան հայրերի տվանդությունը՝ Աճառյանը գրեթե իր բոլոր աշխատություններում անխրաժեշտ է համարում տևողակ պաշին, թե ուսումնասիրության ընթացքում ինչ աղբյուրներից է օգտվել, և ընդհանրապես ինչ ուսումնասիրություններ կան տվյալ հարցի շուրջը:

Աճառյանի հավաքած մատենագիտական բոլոր նյութերի նշված բոլոր գանկերի ետնադուրսարն է կազմում «Հայ լեզվաբանական մատենագրություն» անտիպ աշխատությունը, որտեղ ընդգրկված են հայերեն և օտար լեզուներով աշխարհի տարբեր տեղերում 17-րդ դարի

վերջից մինչև 20-րդ դարի 40-ական թվականները տպագրված շուրջ 4000 գրքեր. հատվածներ. հոդվածներ, որոնց մասին տեղյակ էր հեղինակը, և որոնք այս կամ այն կերպ անցվում են հայերենին: Եթե սրան ավելացնենք տարբեր տարիների կտրիմամ, Թավրիզում, Թեհրանում, Նոր Բայազետում, Էջմիածնում ուսումնասիրած հազարավոր ծեռագրերի ցուցակների կազմումը և երատարակումը, ապա իրավամբ կարող ենք Աճառյանին բնութագրել նաև որպես մեծ մատենագետ:

Այսպեսով չեն սպառվում աշխարհառակ լեզվաբանի ուսումնասիրությունները: Նա հեղինակ է երկու հայրույրից ավելի տպագիր և անտիպ ուրիշ աշխատությունների, հոդվածների, գրախոսությունների, որոնց մի մասն առնչվում է հայ գրականության պատմությանը և վիճաբանությանը, հայ ժողովրդի պատմությանը, արևելքի պատմությանը, հայ բանախոսությանը և այլ բնագավառների:

Առանձնակի արժեք ունի նաև «Կյանքիս հուշերից» (1967) աշխատությունը, որտեղ Աճառյանը իր կենսագրությանը գուցենթաց արժեքավոր տեղեկություններ է տալիս Մաթի, Վուրջմանի, Մելի, Պարոնյանի, Հովհաննիսյանի, խրիմյան Հայրիկի, Աբելյանի, Կոմիտասի, Մանանյանի և հայ ու օտարագրի բազմաթիվ ուրիշ գիտնականների, գրողների, մանկավարժների, հասարակական գործիչների մասին մանրամասն ներկայացնելով նաև իր այցելած երկրները, գավառները, քաղաքները, գյուղերը, նրանց բնակիչների կենցաղը:

Ամփոփում

Հոդվածում բնութագրվում է հայ լեզվաբանության մեծագույն ներկայացուցիչ Հրաչյա Աճառյանի մանկավարժական, լեզվաբանական և մատենագրական գործունեությունը: Հայ բանափորության և պատմագրության համար մեծ արժեք են ներկայացնում նրա այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են «Հայ բարբառագիտություն», «Գավառական բառարան», «Հայերենի արմատական բառարան», «Հայոց անձնանունների բառարան», «Հայոց լեզվի պատմություն», «Լիակատար քերականություն հայոց լեզվի» համալսարանային 562 լեզուների»: Աճառյանը նաև հեղինակ է ավելի քան 200 տպագրված և անտիպ գիտական աշխատանքների, որոնց մի մասը վերաբերում է գիտության այլ բնագավառների:

Резюме

В статье характеризуется педагогическая, лингвистическая и библиографическая деятельность крупнейшего представителя армянского языкознания Рачьи Ачаряна, 130-летие со дня рождения которого исполнилось в марте этого года. Для армянской филологии и историографии, большую ценность представляют такие его труды, как “Армянская диалектология”, “Армянский диалектологический словарь”, “Корневой словарь армянского языка”, “Словарь армянских личных имен”, “История армянского языка”, “Полная грамматика армянского языка в сравнении с 562 языками”. Ачарян также является автором более 200 напечатанных и непечатанных работ, часть которых относится к иным сферам науки.

Ծանոթագրություններ

1. Տես Հր.Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 18:
2. Տես Հր.Աճառյան, Մանկական բարբառ, Բանասիր, Փարիզ, 1901, N3, պրակ Ա:
3. Տես Հր.Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան 1967, էջ 438:
4. Տես Հայերենի բարբառագիտական առլաւ, Խ.1, Երևան, 1982, թջ 52-53:
5. Տես Ա.Ս.Ղարիբյան, Հայ լեզվաբանության խոշորագույն ներկայացուցիչը, Պատմաբանասիրական հանդես, 1966, էջ 18
Այս նպատակամանքները հայատնանում բախվանին թույլ են զարգացում, որի պարագայում ՀՀ-ում ԼԲ կողմից կառավարվող տոկոսադրույթի փոխանցման ուղին շատ թույլ է գործում: Հայտն վերոնշյալ հանգստանքին, Կենտրոնական բանկը չանքնր է գործարելու կարճաժամկետ տոկոսադրույթների կառավարման միջոցով ազդել համախառն պահանջարկի որոշակի մակարդակի ձևավորման վրա՝ արտադրության համար գնաճի նպատակային ցուցանիշը:

ՀՀ ԼԲ-ն որպես գործառնական նպատակ կընդունի կարճաժամկետ տոկոսադրույթը: Մակայն, ֆինանսական կայունության ապահովման նպատակներինց նշելով, անհրաժեշտության դեպքում ԼԲ-ն կկիրառի նաև ծավալային կարգավորման մտնցումներ:

Հատկաշահական է, որ գնաճի նպատակավորման ռազմավարության ինտիմոգիանալ դասակարգման պայմաններում շեշտվում է ընդհանուր 3% գնաճի նպատակային միջավայրի սահմանումը, դրան համեմելու հսկանականությունների բաշխման գրաքիկների կառուցումը և հրապարակումը ինչպես նաև հայեցողական քաղաքականության որոշումներն ստան, ինչը ենթադրում է գնաճի վրա ազդող ցուցանիշների լայն դաշտի դիտարկում և փորձագետների դատադրությունների հաշվառում:

Նշենք, որ առավելագույնը 3% ընդհանուր գնաճին հասնելու մեկ տարվա հորիզոնը և այն մատակա տադիրներին պահպանելը դեռևս բավարար էինք չի կարող հանդիսանալ տնտեսական տպելվաների

համար ռազմավարական քննության ներդրումների ընդունման համար և ներկայացվեց այդ գույքահիշմարիտների մակարդակ մինչև 2015 թվականը ամբողջական է ՀՀ կառավարության դեռևս 2003 թվականին ընդունված «Աղյուսակային հաղթահարման ռազմավարական ծրագրում»:¹ Ուստի հաշվի առնելով այն, որ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա պետք է իրականացվի կարծածամկվող տոկոսադրույթների և փոխարժեքի փոփոխությունների միջոցով, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշված փոխանցման մեխանիզմների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նախադրյալները ՀՀ-ում բավականին թույլ են զարգացած (ֆինանսական շուկա, ֆինանսական միջոցների բարձր տատկեռելիք և ֆինանսավարական բազմազան գործիքակազմ) անհանրին է թվում կարծածամկվող տոկոսադրույթների կառավարման միջոցով արդյունավետորեն ազդել համախառն գրեհանջարկի վրա, դրանով իսկ ապահովել գնաճի նպատակային ցուցանիշը:

Մի հանգամանք ևս արժեքային շուկայի գործունեությանը չմիջամտելը ՀՀ կԲ -ի կողմից հանգեցրել է փոխարժեքի այնպիսի տատանումների որոնք կապված չեն ֆինանսական շուկաների հետ: Այսպես՝ 2005թ. ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2004 թվականի համեմատությամբ արժևորվել է 20-25 տոկոսով, մինչդեռ դոլար-եվրո փոխարժեքի տատանումները կապվել են 5-7 տոկոս: Մյուս կողմից, չնայած անվանական փոխարժեքի արժևորմանը, իրական արդյունավետ փոխարժեքը մնում է արժեզրկված: Այս հանգամանքը առաջին հերթին պայմանավորված է առևտրային գործընկեր ներկրների համեմատ ՀՀ-ում տվյալի գաճի է կայուն գնաճով և այդ ներկրներում ԱՄՆ դոլարի նկատմամբ իրենց արժույթների համեմատաբար արժևորմամբ:

Որպես ռազմավարական նպատակ հռչակելով ՀՀ դրամի կայունությունը, մեր կարծիքով, այն կարելի է ապահովել տնտեսական կայուն աճի տեմպերի, ներքի արտաքին տնտեսական կապերի բազմաոնխակացման, էներգետիկների և հումքի համաշխարհային գների կոնյուկտուրայից խիստ կախվածության նվազեցումից ելնելով:

Ռազմավարական առումով Եվրոմիության հետ ՀՀ ինտեգրումը դիտելով որպես երկարաժամկետ նպատակային բաղադրիչ հարկ է ճշգրտել տնտեսության զարգացման, ուղղությունները, որոնց շնորհիվ, կարծում ենք, կարելի է ապահովել տնտեսական բարձր աճ:²

Իսկ ներկայումս կենտրոնական և արևելյան Եվրոպայի ներկրները փուլ առ փուլ վճռում են տրանսֆորմացիոն ժամանակաշրջանի խնդիրները, մտնելով Եվրոմիություն և իրենց առջև միջազգային արտադրության քաղաքականության մեջ դնում են ռազմավարական նպատակ՝ Եվրոմիության միանման արժույթի մտցումը:³

Կարծում ենք, այս հարցադրումը ևս ունի ռազմավարական նշանակություն:

Ամփոփում

Հաղվածում քննարկվում և բացահայտվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության հիմնական ծաղրությունները արդի ժամանակաշրջանում, մասնավորապես գնաճի և հայկական դրամի փոխարժեքի կարգավորման մեխանիզմները և դրանց փոխազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Դիտարկվում են վերաբնակիչ գնաճի ռազմավարության իրականացման մոտեցումները և նշված փոխանցումային մեխանիզմների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների թույլ զարգացության մասին:

Резюме

В статье обсуждаются и раскрываются основные направления денежно-кредитной политики ЦБ РА в современный период, в частности, механизмы регулирования инфляции и курса армянского драма и воздействия последних на экономику РА. Рассматриваются подходы проведения стратегий контролируемой инфляции и отмечается слабость развития необходимых предпосылок для эффективной деятельности переводных механизмов.

Ծանոթագրություններ

1. "Теория переходной экономики", под редакцией Булатова М., 2006г.: стр. 1
2. «Գնմիային գործ», Եր., «Արարման Հրատ», 2004թ., էջ 157:
3. ՀՀ կԲ նախագահի գեղարվեստական Պետական Տնտեսագիտական Ինստիտուտում /14.12.2005թ./ www.cba.am:
4. ՀՀ Պաշտոնական տեղեկագիր, N43, 2003թ.:
5. Զեմ. Սովետյան, «ՀՀ տնտեսության զարգացման մակարդակը և հետևանքները», Հայաստանի ֆինանսներ և Իրնոմիկա, NN 12-13, 2004, էջ 25:
6. К. Рудый, "Международные валютные отношения в переходный период" Банковский вестник 2005 стр. 14

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՆՈՂԵՍ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օ. Նալբան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ռ. Նալբան, տնտեսագիտության ամբիոն

Ինչպես ամեն մի հասարակական գիտություն, տնտեսագիտություն տնտեսությունը նույնպես իր առարկայի և օբյեկտի ուսումնասիրության նպատակով սահմանում և կիրառում է բազմաթիվ կատեգորիաներ: Ն. Մենկյուն նշում է, որ «Տնտեսագիտության տեսությունը որպես գիտություն ունի ոչ միայն իր հատակ առարկան, այլև հատակ տերմինաբանություն և դատողություն ընթացք»¹: Ընդունելով այս ճշմարտությունը, պետք է նշել, որ տերմինների և դատողության ընթացքի ընտրությունը իր էությանը սուբյեկտիվ լինելով հանդերձ ունի օբյեկտիվ նախապայման /նախադրյալ/: Եթե մակրոտնտեսագիտությունը զբաղվում է հասարակական տնտեսության, որպես մեկ միասնական ամբողջի, զարգացման վերլուծությամբ, տնտեսագիտության /մասնավորապես մակրոտնտեսագիտության/ տեսության նպատակը հանդիսանում է հասարակական տնտեսության գործունեության միասնիկով ընթանումը, իսկ վերջինս իրենից ներկայացնում է կոնկրետ պատմական մոդել /համակարգ/, հասարակության զարգացման այդ փուլի հատուկ սկզբունքային տնտեսական կապերի ընդհանրություն, որոնք դրսևորվում են տնտեսական օրենքների և օրինաչափությունների գործողությամբ ձևով:

Տնտեսական կատեգորիաները սահմանվում են ուսումնասիրելու այդ կապերն ու հարաբերությունները: Տնտեսության այս կամ այն մոդելին առնչվող ամեն մի ուսումնասիրության ժամանակ կարևոր է նկնել այն սկզբունքի, որ տնտեսական տվյալ և դրան բնորոշ ցուցանիշի փոփոխությունը պարտադիր հանգեցնում է մեկ այլ երևույթի և նրան բնորոշ ցուցանիշի /կամ ցուցանիշների/ փոփոխությանը, պայմանավորված տնտեսական կյանքում առկա ընկերային և հետևանքային /էկոգեն և էնդոգեն/ երևույթների առկայությամբ. որոնք գտնվում են մշտապես կրկնվող պատճառահետևանքային կապի մեջ:

Աբստրախիվելով ոչ էական առանձնահատկություններից կարելի է նշել, որ տնտեսական կատեգորիաները, ըստ համընդհանուր մոտեցման, հասկացություններ են /մտերկանց տրամաբանական մտածողության արդյունք/ կրկնված արտահայտելու իրավանքով գոյություն ունեցող տնտեսական հարաբերություններն ու երևույթները:

Այս առումով մենք խնդիր չենք դնում վերլուծելու տնտեսագիտական կատեգորիայի՝ որպես սուբյեկտիվ /տերմինաբանության առումով/ և օբյեկտիվ /բախնդակային առումով/ դիալեկտիկային առնչվող հարցեր, որոնք բավարար չտրվով պարզաբանված լինելով տնտեսագիտական գրականության մեջ, այնուամենայնիվ շարունակում են մնալ հասարակագետների գիտական ուսումնասիրությունների տեսադաշտում:

Մեր կարծիքով առավել հետաքրքրական և գիտական առումով ուշագրավ են մասնագիտական գրականության մեջ տնտեսագիտական կատեգորիաների առավելապես էությանն ու դրանք բնորոշմանն առնչվող նորանոր հարցերի շարունակվող քննարկումները: Դրանք պայմանավորված են նրանով, որ բացարձակ ճշմարիտ, լիարժեք հստակեցված և անսխալ տնտեսագիտական տեսություններ չեն լինում, թեև լուրջ նրա համար, որ նախադրյալները, կանխատեսումները և եզրակացությունները միշտ էլ դիտվում են նոր հեղափոխների կողմից՝ պայմանավորված հասարակության տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների տեսական վերլուծության անբաժնետոյսամբ: Օրինակ, եթե 1950-ական թվականներին Ֆրիդմենը գտնում էր, որ կանխատեսումների ճշտությունը հանդիսանում է տնտեսության գնահատման միակ չափանիշը, ապա 30 տարի անց Բյաուզը Ֆրիդմենի այդ եզրակացությունը համարեց նոր մեթոդոլոգիական միջոցառում միակ լսացնի կողմը²: Եվ դա քննական է, որովհետև տնտեսության գլխավոր պրոդուկտն են հանդիսանում եզրահանգումներն ու կանխատեսումները, որոնք չեն կարող հեջարկվել նախնական լաբորատոր փորձարկության, ուստի և մշտապես ենթարկվում են հետագա պարզաբանումների ու ճշտումների:

Այս հողվածում համեստ փորձ է կատարվում, թեև լուրջ և հարցադրման կարգով, որոշակի կարծիք արտահայտելով «Տնտեսական աճի» որպես տնտեսագիտական կատեգորիայի էությանն ու բնորոշման /ձևակերպման/ վերաբերյալ:

Տնտեսական աճը բոլոր ժամանակներում և տնտեսագիտության տարբեր դպրոցների և ուղղությունների կողմից դիտվել է դիտվում է որպես տնտեսագիտության տնտեսական ու տնտեսագիտական պրակտիկայի կարևոր հիմնականներից մեկը, քանի որ տնտեսական աճի կայուն տեմպերը հանդիսանում են կենսաուսկարգողակի բարձրագույն բանալին, իսկ վերջինիս առկա աճի ապահովումը կազմում է ամեն մի պետության գլխավոր տնտեսական խնդիրը: Մյուս կողմից խնդրի այդպիսի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն տնտեսական աճի, որպես ներույթի նշանակությամբ կամ տնտեսական տարբեր համակարգերում նրա բովանդակությամբ, մոդելներով, աճի գործոնների և այլ առանձնահատկություններով, այլ և այն հասկացմամբ, ինչպես նշում է ամերիկյան տնտեսագետ Ռեն Մեյզլանը, որ «...տնտեսական աճը, իրենից ներկայացնում է արտակարգ բարդ ներույթ, ..., և բազմաբնույթ կրթություն տնտեսական մշակումը՝ հանդիսանում է համադրյալ անհնարին գործ»»: Այնուամենայնիվ «անհնար գործ» լինելով՝ հանդերձ, տնտեսական աճի վերաբերյալ ժամանակակից տնտեսագիտական գրականությունը ամփոփում է՝ բավականին լուրջ և ծախվալու ժառանգություն, որը ստեղծվել և զարգացվել է տնտեսագիտության պատմական բոլոր ուղղությունների դասակարգումների ու նրանց հետևորդների կողմից:

Ներկայացվող խնդրի վերաբերյալ ամենատարբեր մոտեցումների ընդհանուր իմաստը կայանում է նրանում, որ տնտեսական աճը որպես ներույթ բնութագրում է ընդարձակա՝ միատարրությունում դժնամիշտ:

Այսպես օրինակ, ընդհանրացնելով ներույթի բազմաթիվ տարաբնույթ բնորոշումների իր ուսումնասիրությունը, Մ. Մաքթոնդոկը ներկայացնում է, որ տնտեսական աճը որպես իրական համակարգ ներքին առույնից համ ՎՄԱ- հարաբերական փոփոխություն է դիտարկվող ժամանակաշրջանում⁶:

Մյուս կողմից, Նթն մի պահ վերանայն տարբեր բնութաշարժումների հատուկ առանձնահատկություններից ու տարբերություններից, ապա կնկատենք, որ դրանցում տնտեսական աճը առաջին հերթին հանգցվում է նյութական բարիքների և ծախսարկունքների քանակական աճին: Անկախ դրանց արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման համ հասարակական վերադասարկության/ պատվական ձևերի առանձնահատկություններից, դրանք վերջին հաշվով կազմում են տվյալ հասարակության տնտեսական և սոցիալական առաջընթացի հյուսված կենսական անհրաժեշտ/ նյութական հիմքը:

Այլ կերպ ասած, անհիշական պատճառահետևանքային կառուցվածքում ունի «տնտեսական աճ» և «հասարակական բարեկեցություն» ու նրա աճի միջև որպես ներույթների: կամ կարելի է ասել, որ ներդրող ներույթը առաջինի հասարակական դաստիարակման ձևն է և հանդիսանում է փաստացի տնտեսական աճի հրաշալի սոցիալ-տնտեսական գնահատական:

Ընդունելով այս կապը որպես մշտապես կրկնվող ներույթ՝ կնշանակի, որ մենք գործ ունենք տնտեսական օրենքի հետ, քանի որ լրջորեն չի վիճարկվում այն տեսակետը, ըստ որի տնտեսական օրենքները դրանք տնտեսական ներույթներում և գործընթացներում մշտապես կրկնվող պատճառահետևանքային կապերն են և փոխադարձավորվածությունները:

Այս դեպքում առաջ է գալիս ներկա օրինաչափ հարց:

Արդյոք տնտեսական աճը, որպես նյութական բարիքների և ծախսարկունքների որոշակի քանակ/ համ դրանց դրամական արտահայտությունը/ միշտ է հանգցնում հասարակական բարեկեցության աճի, թե ոչ: Եթե այո, ապա կնշանակի, որ գործում է տնտեսական աճի և նյութական բարեկեցության փոխադարձ կապի համընդհանուր տնտեսական օրենքը: Եթե այս կապը կարող է խախտվել տնտեսական աճի տվյալ մեծությամբ դժգոհում կենսամակարդակի փոփոխության բացակայությամբ, կնշանակի, որ մենք գործ ունենք ոչ թե տնտեսական օրենքի այլ օրինաչափության հետ:

Տնտեսագիտությունը շատ վաղուց է պարզաբանել, որ տնտեսական աճի հիմքում առաջին հերթին ընկած է կուսակական ծախվածքների աճը: Իզուր չէ ասված, որ տնտեսագիտական/ հետազոտող և տնտեսագիտության/ առավել կարևոր խնդիրներից մեկն այն է, թե ստեղծված արդյունքի որ մասը պետք է սպառվի այսօր և որ մասը պետք է խնայվի ապագայում օգտագործելու համար⁷, այսինքն կուտակվի, հաշվի առնելով, որ խնայողության առավել բարձր նորմայի դեպքում, տնտեսությունը, մյուս հավատարմ պայմաններին առկայությամբ, կունենա կապիտալ կուտակման առավել մեծ ձեռքով՝ ապագայում տնտեսական ավելի մեծ աճի և հետևաբար նոր կենսամակարդակի համար⁸:

Եվ քանի որ՝ տվյալ առեփ դրությամբ տնտեսական աճը և կենսամակարդակի բարձրագույն խնայողը էապես պայմանավորված է ստեղծված արդյունքի ներկա մասերի

հարաբերությանը՝ մյուս հավատար Կայանաներում/ առաջ միշտ չէ, որ տնտեսական աճը որպես նյութական բարիքների և ծառայությունների քանակական ավելացում կարող է հասցնել մարդկանց բարեկեցության համաչափ աճի: Այսինքն՝ տնտեսական աճի և բարեկեցության փոխադարձ կապը օրինաչափություն է, բայց ոչ օրենք:

Այլ կերպ ասած տնտեսական մի երևույթ միշտ էլ բնութագրում, իր հետևանք երևույթի փոփոխությունը յուրաքանչյուր տվյալ պահին, այլ պայմանավորում է այն իրավիճակը /դրությունը/, որին նա ձգտում է: Այս պնդումը չի հակասում վերը նշված էկզոգեն և էնդոգեն երևույթների փոխադարձ կապի բնորոշմանը, քանի որ խոսքը տվյալ դեպքում գնում է ոչ թե երևույթների փոխադարձ անավարժանության դինամիկայի, այլ իրավիճակային գնահատումն ևս: Մյուս կողմից ընդունելով «տնտեսական աճի» և «հասարակական բարեկեցության աճի» փոխադարձ պայմանավորվածությունը, կամ այլ կերպ ասած ստեղծված բարիքների ծավալի և սպառման մեծություն միջև կապը, սենք կամա թե՛ անտաճ չենք տեղափոխում արդար տնտեսական ուսումնասիրության ասպարեզը գոտ նյութական աշխարհ, ինչը, մեր կարծիքով, խաչընդունում է վերը նշված տնտեսական կատեգորիաների միջոցով արտահայտվող արտադրական հարաբերությունների անհրաժեշտ հիմնավորմանը:

Ուստի գիտական փորձում տնտեսական պայմաններում ընդունելի է այն ձևակերպումը, համաձայն որի «տնտեսական աճ» տառով՝ այն իմաստ ունի, քան նույն էությունը գոտ նյութական ու օգնականները կողմը: Հիշենք նաև, որ միևնույն երևույթը կարող է դրսևորվել երկրի էկոնոմիկայի մակրո և միկրո մակարդակներում, ինչը օբյեկտիվորեն ենթադրում է դրսևորման ձևերի և բնորոշ պարամետրների, ցուցանիշների, չափորոշիչների առանձնահատկություններ: Հայտնի է, որ տնտեսագիտության տեսության մեջ տնտեսագիտական եզրակացությունների և կանխատեսումների օբյեկտիվության գլխավոր գործոնը հանդիսանում է «... մթնոլորտից անկախ կանխատեսությունը և նշանակալի նախադրյալների ճշգրտությունը»⁷: Այսինքն, տնտեսագիտական խնդիրները անհրաժեշտ է քննարկել /ուսումնասիրել/ տնտեսագիտության տեսության նկատմամբ՝ սկզբունքների շրջանակներում, որոնց համաձայն տնտեսական օրինաչափությունները փոխկապակցված են մեկ միասնական համակարգում, ինչը ենթադրում է նաև դրանց ուսումնասիրության միասնական մթնոլորտայնություն: Այսինքն, հասարակական զարգացումը դիտելով որպես բնապատմական գործընթաց, որն իրենից նմրկապեսցնում է այդ ընթացքի ևս նրա տարբեր փուլերի հատակ համընդհանուր երևույթների ընդհանուր-սցենարիզով և բովանդակությամբ և սցենար-տնտեսական ձևի միասնության, տնտեսական օրինաչափությունների խմատը առաջին հերթին ենթարկված է հասարակական արտադրության նպատակի իրազդրման շաներին:

Գտնում ենք, որ անկախ դրսևորման մակարդակից և առանձնահատկություններից, «տնտեսական աճի» էությունը պետք է դիտել արտադրության սովալ նդանակի գլխավոր նպատակի տեսանկյունից, որի իրագործմանը ենթարկված է արտադրության կազմակերպումը ընդհանրապես:

Հասարակության առանձին վերգված ամեն մի անդամի նպատակը հանդիսանում է սնվական կենսամակարդակի աճը, որի նյութական հիմքն է հանդիսանում իր անձնական հարստությունը /ուճեցվածքը, նյութական և դրամական արժեքների ամբողջությունը, այդ թվում պետության կառավարչ նրան մատուցվող անվճար ծառայությունների մեծությունը/, միջոց՝ ապրանքների ու ծառայությունների ավելի մեծ սպառումը: Ուստի տվյալ երկրում և տվյալ ժամանակահատվածում տնտեսական աճը անհատը գնահատում է իր նյութական դրության /հարստության/ իրական փափուկությանը: Իհարկե, շատ հեղինակներ հարստությունը բնորոշում են որպես «... ընթացիկ և ապագա նվաճությունների ու ժառանգած ակտիվների գումար՝ հանած պարտքերը»⁸: Մակայն սպառման չափերի և ընթացիկ նվաճությունների ծավալի միջև առկա կապը ավելի նկատելի դարձնելու համար, կարծում ենք, որ կարելի է արտահայտել իրական հարստության մյուս բաղադրիչները:

Եթե հասարակության բոլոր անդամների /այսինքն՝ ազգայնականության/ անձնական հարստության ընդհանրությունը /կամ համախառն մեծությունը/ պայմանավորված անվանենք հասարակական հարստություն /որի տակ տվյալ դեպքում հասկանում ենք ՀՆԱ այն մասը, որն օգտագործվում է տվյալ ժամանակահատվածում /օրինակ՝ տարվա ընթացքում/ սպառման համար/, ապա կարելի է վերջինիս համարել հասարակության բարեկեցության նյութական հիմքը: Նախորդ ժամանակաշրջանի համար հասարակական հարստության տեղը մյուս երկրապար պայմանների դեպքում հանդիսանում է տվյալ ժամանակաշրջանի տնտեսական աճի արդյունքը և նրա դրսևորման ձևը:

Այսպես օրինակ շուկայական տնտեսության պայմաններում մասնավոր շահը հանդիսանում է արտադրության այդ նպատակի շարժիչ ուժը, իսկ շահույթը այդ շահի իրագրված /տվյալ/ ցնցարում նաև իրականացված/ արտահայտությունը, նրա մեծության անընդհատ աճը այդ արտադրության անմիջական նպատակը:

Իհարկև, միկրոտնտեսական մակարդակում շահույթի աճ կարող է տեղի ունենալ նաև առանց վերը նշված ծավալի աճի կամ անգամ նվազման պայմաններում: Սակայն տնտեսական աճը որպես տնտեսական կատեգորիա քննարկում է առաջին հերթին և հիմնականում մակրոտնտեսական մակարդակում, իսկ այդ հարթության վրա նշված իրավիճակները օրինաչափ լինել չեն կարող, ուստի և չեն կարող դիտարկվել նրեքի հասարակական առաջընթացին առնչվող խնդիրների համակարգում:

Տնտեսական աճը, որպես հասարակություն առաջընթացն արտահայտող երևույթ իր դրսևորումն է գտնում հասարակական հարստության ծավալների դրական փոփոխության մեջ, որն իր հերթին պայմանավորում է հասարակության նյութական բարեկեցության մակարդակը և նրա միտումները:

Հետևաբար տնտեսական աճ-նյութական բարեկեցություն /ՆԲ/ կապը միջնորդավորվում է հասարակական հարստության միջոցով:

Այսինքն, ՏՄՀ-ՀՀ-ՆԲ տնտեսական երևույթների փոխադասմանավորվածություն և պատճառահետևանքային կապի մեջ է դրսևորվում դրանց հասարակական իմաստը:

Տնտեսական աճը յուրաքանչյուր հասարակության տնտեսությանը հատուկ երևույթ է, առանց որի անիրագործելի կլինի արտադրության հասարակայնությունը կազմակերպված առնչ մի եղանակի վերջնական նպատակի իրագործումը/ հասարակության հաջաճուն նյութական և եռցնոր պահանջմունքների բավարարման աճը:

Հետևաբար առնչ դեպքում արտադրության վերջնական նպատակի իրագործման պայմանը տնտեսական աճն է, միջոցը /նյութական հիմքը/ հասարակական հարստության ավելացումը:

Ուստի, տնտեսական աճը մակրոտնտեսագիտության կոտեգորիա է, այն արտահայտում է երևույթների պատճառահետևանքային կապը հասարակության մատչույթով և հասարակական վերարտադրության ամբողջական ընթացքը բնորոշող արտադրական հարաբերությունները:

Եթե տվյալ ժամանակահատվածում /տարում/, արտադրության միջոցների, սպառման առարկաների և ծառայությունների քանակական ավելացումը չի հանգեցնում հասարակական հարստության աճի, իսկ վերջինս մարդկանց բարեկեցության բարձրացմանը, ապա հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացին զուգահեռ տնտեսական համարժեք աճ՝ որպես քանակության կենսամակարդակի բարձրացման պայման, չի տրծանագործվել: Այսպիսի երևույթ անկետակած ենարավոր է, չնայած օրինաչափ լինել չի կարող:

Հասկանալի է, որ այս դեպքում անխուսափելի է մի հարց, թե ինչպես անվանենք նյութական արժեքների և ծառայությունների ծավալների աճը տվյալ ժամանակահատվածում, եթե ոչ տնտեսական աճ: Միզբունքորեն կարելի է անվանել տարբեր կերպ, օրինակ ՀՆԱ-ի աճ, չնայած տնտեսագիտական գրականության և պաշտոնական միժակագրության մեջ, այն դիտվում է որպես տնտեսական աճի զուգահեռ: Մյուս կողմից ՀՆԱ-ի աճ կարող է տեղի ունենալ նաև հասարակական արտադրության անփոփոխ պարամետրերի դեպքում: Օրինակ նախորդ և ընթացիկ տարում Ռուսաստանում պետության նկատմաների նկատելի աճը հիմք է տվել նախաձեռնել մի շարք նոր առցիակական ծրագրեր: Սակայն նշված երևույթը արտադրության զարգացման արդյունք չէ, այն կարող էր ընթանալ նաև հակառակ ուղղությամբ: Նշված երևույթները օրինաչափություն չեն և չեն կարող քննարկվել որպես օրինաչափ կրկնվող պատճառահետևանքային կապ: Ինչպես արդեն նշել ենք, տնտեսական կատեգորիային բնութագրում է ոչ էպիզոդիկ, այլ օրինաչափ երևույթներին հատուկ ներքին կապը:

Բնականաբար, հարց կարող է առաջանալ նաև, թե ինչպես պարզել, կամ ինչպես է բնորոշվում հասարակական արդյունքի աճի տվյալ մեծության ազդեցությունը կենսամակարդակի և ընդհանրապես ընդլայնված վերարտադրության միտումների վրա: Սա շատ կարևոր հանգամանք է իրական տնտեսական աճը և կենսամակարդակի բարձրացումը գնահատելու համար, սակայն դա առանձին ուսումնասիրության թեմա է, ինչը լայնորեն պարզաբանված է մեր կողմից տրված և բազմաթիվ հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից, չնայած յնդրի արդիականությունից, ծավալից և բարդությունից ելնելով՝ գիտական ուսումնասիրությունները ինտենսիվորեն շարունակվում են:

Ընդհանրացնելով արտահայտված տեսակետները, քննարկվող հարցի վերաբերյալ մենք կարող ենք առանձնացնել երեք փոխադասված եզրակացություններ:

Առաջինը՝ տնտեսական աճը, որպես մակրոտնտեսագիտության կատեգորիա արտահայտում է հասարակական արտադրության մեջ մարդկանց հարաբերությունները, որոշակի ժամանակահատվածում, նյութական բարիքների և ծառայությունների աճի նկատմամբ:

Երկրորդը, այդ աճը հանգեցնում է հասարակական հարստության ավելացմանը /մեծացմանը/ և հիմք է հանդիսանում սպառման ծավալների ընդլայնման համար:

Երրորդը՝ վնոջինս հանգեցնում է հասարակական բաղնիսնությունն բաղնիսնությունն /աճին/ առտահայտելով տվյալ հասարակական առտադրության վնոջնական նատտակի հրագործմանն ղինումիկան և հասարակական առաջնությունն ղնդինությունն:

Մենք հնուու ենք այն կարծիքից, որ հողվածում մեր կողմից տրված բնորոշումները, ձևակերպումներն ու եզրակացություններն անվիճելի և բավարար հիմնավորված են, ուստի դրանց նկատմամբ կատարված ամեն մի դիտողություն կրնադունվի անհրաժեշտ հարգանքով և ուշադրությամբ:

Ամփոփում

Հողվածում քննարկվել է «Տնտեսական աճի»՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բացահայտմանն առնչվող տնտեսագիտական տարբեր դարգենների և ուղղությունների մոտեցումները և հիմնավորվել գիտական բնորոշման տեսակետից առավել ընդունելի ձևակերպումը: Ընդհանրացնելով ընդունված տեսակետները, «տնտեսական աճը» հիմնավորվել է որպես որոշակի ժամանակահատվածում նյութական բարիքների և ծառայությունների աճի նկատմամբ՝ հասարակական արտադրության մեջ մարդկանց հարաբերություններն արտահայտող մակրոտնտեսագիտության կատեգորիա:

Резюме

В статье рассматриваются подходы разных экономических школ и направлений, относящихся к выявлению сущности экономической категории “экономического роста”, обосновывается макроэкономическая категория, которая выражает отношения между людьми в сфере общественного производства в определенный период по отношению к материальным благам и услугам.

Ծանոթագրություններ

1. Н.Менько, Макроэкономика, Москва, 1994г. стр.45.
2. М.Балуг, Экономическая мысль в ретроспективе, Москва, дело ЛТД 1994г. стр. 651.
3. Курс Экономической теории, Киров, 2002г, стр. 527.
4. М.Сафрончук, Курс экономической теории, под ред. М.Чепурина и Е.Киселевой, Киров, 2002г. стр.558.
5. Ձևակերպումից բխում է, որ հեղինակը ՀՆԱ-ի ամեն մի դրական փոփոխություն դիտում է որպես տնտեսական աճ:
6. Н.Менько, Макроэкономика, Москва 1994г., стр. 143.
7. Там же, стр. 156.
8. М.Балуг, Экономическая мысль в ретроспективе, Москва, 1994г., стр. 659.
9. М.Бурда, Ч.Виллош, Макроэкономика, С.Петербург, “Судострпение”, 1998г., стр. 86.

ԱՇԽԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԼԵԿՏԻԱՅԻ ՍՈՐՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Գուլյան, պրոֆեսոր, Կոտայքի մարզի Կ. Աղալյան, Ն. Մելքոնյան

Հացահատիկի արտադրության ավելացումը, որը բխում է ժողովրդական տնտեսության զարգացման անհրաժեշտությունից, հնարավոր է իրականացնել մի քանի ճանապարհով: Նախ՝ բերրատվության բարձրացման հաշվին, որը ամենից շահավետ նշանակում է և: Երկրորդը՝ ցանքատարածությունների ընդարձակման հաշվին: Առաջինը կապված է արդյունավետ սորտի մշակության, բարձրորակ սերմի օգտագործման և ագրոմիջոցառումների մի ամբողջ համալիրի պատշաճ կիրառման հետ: Երկրորդը՝ ճանապարհը էքստենսիվ, ոչ արդյունավետ նշանակ է: Համախառն բերքի ավելացումը կապված է տնկի ունենալ ավելի շատ հեկտարների մշակության հաշվին, որը անվիճելիորեն լրացուցիչ ծախսեր է պահանջում, իսկ ստացված հատիկի ինքնաբերելը ավելի է բարձրանում:

Յուրով, ցանքատարածությունների ընդարձակմամբ համախառն բերքի ավելացման տարբերակը դարձել է ներկայիս հացահատիկ արտադրողների հիմնական գնաճը:

Այժմ, երբ հողի սեփականացման արդյունքում առաջ են եկել հազարավոր մանր սեփականատերեր, որոնց հողաբաժինը չի անցնում մեկ տասնյակ հա-ից, և: որոնք չեն կարողանում խուսափել մոնոկուլտուրայից, այսինքն՝ անհնար է դարձել ցանքաշրջանատության կիրառումը, զբերել բացառապես է կամ նվազագույնի է հասցված պարսպառնությունների (օրգանական և: հանքային) օգտագործումը, գիտվում է հողի սորտավարժայի վարտարացում, բերրիության նվազում, ագրեսիվ հացազգի մոլախտերով աղտոտում, որոնք ի վերջո հանգեցնում են քնքրատվության իջեցմանը, ինչին էլ մենք ակնհայտ ենք լինում: Նման պայմաններում միակ մատչելի ճանապարհը մանր հողատերերի (և: ինչու միայն նրանց) համար մնացել է սորտի ճիշտ ընտրությունը, թեև սերմնաբուծության նրբնիքի հստակ գործող համակարգի կազմավորման պայմաններում միշտ չէ, որ հաջողվում է ցանկալի սորտի սերմի հայթիայությունը:

Հանքահատությունում երկրագործության նման էքստենսիվ վիճակի դնպրում կարելի է սելեկցիայի նվազմանը՝ նոր բուծված սորտերի սորտափորձարկումը տարբեր հողակալական պայմաններում և: արդյունավետ ձևերի առաջարկումը հացահատիկի արտադրությանը զբաղվող ֆերմերներին: ԸՀՀ-ի, ինչպես նաև ՀՀ-ի համար կարծում ենք ստորադեցիական նշանակություն ունի ինչպես բարձրարժեք սորտերի առկայությունը, այնպես էլ տնկում որակյալ սերմացու աճեցնելու հնարավորության ստեղծումը:

Հացահատիկային մշակաբույսերի, այդ թվում մեզ համար հիմնական պարենային մշակաբույս հանդիսացող աշնանացան ցորենի սորտերի հարմարվողականությունը և: բերքային պոտենցիալը հնարավորությունների դրսևորումը հողակալական տարբեր պայմաններում տարբեր է:

Բնորոշվելու պոտենցիալ ընդունակությունը, հողում նշած սննդային տարրերի ու խոնավության արդյունավետ օգտագործումը ամեն մի սորտի ժառանգական հատկությունն է:

Սորտափորձարկման խնդիրը կայանում է նրանում, որպեսզի մշակության համար առաջարկված սորտերը ագրոտեխնիկական ճիշտ նշանակվող փորձարկման դրվն միասնական պայմաններում և: համապատասխան գնահատման միջոցով հայտնաբերվեն ամեն մի կոնկրետ գոտու համար առավել հարմարվող ու բարձր արդյունավետություն ցուցաբերող սորտերը (4):

Այդ նպատակով Արցախի «Մերմաբուծություն, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանման և սերմերի որակի վերահսկման կենտրոն» ՓԲԸ (նախկին «Սորտափորձարկման և շրջայնացման պետական հանձնաժողով» իրավահաջորդը) 2003 թվականից իրականացնում է աշնանացան ցորենի հուլիական սելեկցիայի մոտ մեկ տասնյակ հեռակարգային սորտերի փորձարկման և գնահատման աշխատանքներ, միաժամանակ կազմավերվելով նախնական տվյալներով լավագույնների առաջնային սերմնաբուծությունը:

Մասնավորապես այդ սորտերը փորձարկվում են Ասկերանի շրջանի Աստղաշենի փորձադաշտում: Իհարկե, կարևոր է և: ցանկալի, որպեսզի հնարավորություն ստեղծվի նման փորձարկումները գույահեռաբար իրականացնել նաև: Մարտունի, Մարտակերտի և: այլ շրջաններում ու գոտիներում, որտեղ աշնանացան ցորենը բնագործակ ցանքատարածություններ է զբաղեցնում:

Սորտավործարկումների ու սերմնաբուծական աշխատանքների համար նախատեսված տեխնիկայի (փորրածափալ շարքացան, կոմբայն եւ այլն) թափանցիկ ու անվտանգ փոխակեր հնարավորություն չի տալիս անհրաժեշտ տնկարանները տնդադրել համեմատաբար ընդարձակ փորձամարզներում և իրականացնել թարժ վերատառցային սերմի բազմացում:

Ուստի փորձարկվող սորտերը ցանվում են ձեռքով, 1-10 քառ. մ. փորձամարզներում չորս կրկնողությամբ: Դա հնարավորություն է տալիս բոլոր մաքուր հատիկների համար ունենալ միատիպ եռադիտողներ, իսկ կրկնողությունների մեծ քանակությամբ նպաստում է ավելի հավաստի տվյալներ ստանալուն: Հավասար թվով սերմեր ցանվելով, բոլոր սորտերի համար ստեղծվում է միասնական խտություն, իսկ բույսերի համար՝ միասնական սնման մակերես:

Աճի ու զարգացման տարբեր փուլերում սորտերը գնահատվել են իրենց կենսաբանական եւ տնտեսական հատկանիշների ու հատկությունների դրսևորման տեսիմանով, պատկերելու եւ սնկային հիվանդությունների հանդեպ ունեցված դիմացկունությամբ եւ այլն:

Հասունացման փուլում բոլոր կրկնողություններից վերցվել է յուրաքանչյուր սորտի համար տիպիկ 20-ական հատիկ, որոնց ընտելացման արդյունքով որոշվել են նրանց բերքի կառուցվածքային տարրերը՝ հասկի զանգվածը, հատկում հատիկների քանակը, նրանց զանգվածը, հատիկների խոշորությունը (1000 հատիկի կշիռը), որոնք որոշակի պատկերացում են տալիս սորտերի բերքային հնարավորությունների մասին:

Սորտերը բերվում են այդ անալիզների արդյունքները (աղյուսակ):

Աղյուսակ

Աշխատացան ցորենի մի քանի հեռակառային սորտերի բերքի կառուցվածքային տարրերի դրսևորումը (Աստղաշեն, 2004թ.)

Սորտերը	Հասկի զանգվածը՝ գ	Մեկ հասկի հատիկների քանակը՝ հատ	Հասկի հատիկների զանգվածը՝ գ	1000 հատիկի զանգվածը գ
Բեգոստայա 1 (Տե)	2.22	38.4	1.73	43.4
Անի	2.65	37.2	1.86	37.4
Լայվար	2.31	35.5	1.71	43.8
Արգախ	2.77	45.8	2.00	43.1
Վարանդա	3.30	55.3	2.40	43.2
Նաիրի 68	3.05	42.0	2.15	47.0
Ամարաս -290	3.56	56.0	2.44	40.6
Շուշի	2.76	50.6	2.09	37.9
Խաչենի-149	2.84	47.0	2.01	40.6

Երկրագործության ներկայիս պայմաններում ուշադրության են արժանի այն սորտերը, որոնք ընդունակ են մշակության, ագրոտեխնիկական միասնական պայմաններում ձևավորելու ավելի արդյունավետ հասկեր:

Աղյուսակի տվյալներից կարելի է նկատել, որ փորձարկվող սորտերի զգալի մասը ստուգիչ Բեգոստայա 1 սորտի համեմատությամբ զայացրել է ավելի արդյունավետ հասկեր: Այսպես, Արգախ, Վարանդա, Նաիրի 68, Ամարաս, Շուշի սորտերը աչքի են ընկել հասկի ավելի մեծ զանգվածով (2.76-3.56գ), հասկում հատիկների թարժ քանակով (42-56) եւ մեկ հասկի հատիկների զանգվածով (2.09-2.44գ):

Բեգոստայա 1 սորտի մոտ այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 2.22, 38.4 եւ 1.75: Հազար հատիկի կշռով առավել աչքի է ընկնում Նաիրի 68-ը (47գ):

ՀՀ Արարատյան հարթավայրի պայմաններում նախկինում կատարած հետազոտություններով համոզվել ենք, որ բերքի կառուցվածքային տարրերը որոշակի չափով սերտ են ուղղակի կապի մեջ են բերքատվության հետ: Միաժամանակ պարզվել է նաև, որ հասկի զանգվածը ավելի սերտ կապի մեջ է հասկում հատիկների քանակի ու նրանց զանգվածի հետ (1, 2): Այդ օրինաչափությունը նկատելի է նաև Արգախի պայմաններում կատարված փորձում: Հետևապես, առանց մեծ թվով աշխատատար անալիզների կատարելու միայն հասկի միջին կշռով կալելի է բավական մեծ ճշտությամբ պատկերացում կազմել ցանկացած սորտի բերքային ընդունակությունների մասին: Այստեղ կարևորվում է միավոր մակերեսի վրա հավասար թվով հասկակիր ցողուններ ունենալու անհրաժեշտությունը, որը հիմնականում կարգավորվում է

ցանքի ճիշտ խտության ապահովումով: Ոչ ինտենսիվ մշակության պայմաններում, ինչպիսին այժմ տեղի ունի, սորտերի թփակալության տարբերությունը գրեթե դեր չի կատարում:

Ուշագրության է արժանի նաև այն հանգամանքը, որ փորձարկվող սորտերի մի մասը, մասնավորապես Անին, Արգալը, Վարանդան և Ամարասը հասկի արդյունավետության բարձր ցուցանիշներ ունեցել են նաև նախորդ տարվա փորձարկումներում (3):

Մենք հսկված չենք պնդելու, որ փոքրածավալ փորձարկումների արդյունքի հիման վրա կատարած նորակագույնը մի խումբ սորտերի առավելության վերաբերյալ վերջնական է: Հայտնի է, որ սորտի բերքատվությունը փոքր փորձամարզերում և արտադրական ցանքում (մեծ տարածության վրա) կարող է տարբեր լինել: Ուստի նախնական փորձարկման արդյունքներով լավագույն ճանաչված սորտերը պետք է անցնեն նաև արտադրական լայն փորձարկում, որի համար, ինչպես նշվեց վերևում, ցավոք չկա համապատասխան տեխնիկա: Վերջինս նաև անչափ անհրաժեշտ է սկսած սերմնաբուծական ծրագիրը շարունակելու համար:

Ամփոփում

Հոգվածում քննարկվում են ԼՂՀ-ում հացահատիկի արտադրության ավելացման, բերքատվության բարձրացման և հողի մասնավոր սեփականատիրության ներկայիս պայմաններում, երբ երկրագործությունը տարվում է էքստենսիվ ճանապարհով, արդյունավետ սորտերի հայտնաբերման ու սերմնաբուծության կազմակերպման հետ առնչվող մի քանի հարցեր:

Резюме

Увеличение производства зерна озимой пшеницы, как основной продовольственной культуры, может быть осуществлено двумя путями: повышением урожайности, что связано с выбором урожайного сорта, наличием качественных семян и правильным применением целого комплекса агроприемов, и второе - увеличением посевных площадей, что в настоящее время имеет место.

В условиях частной собственности на землю, и в связи с малоземельностью основной части землевладельцев, минимализации и отсутствии удобрений, продолжительной монокультуры, происходит ухудшение плодородия почвы, засорение посевов сорняками и снижение урожайности.

В таких условиях важное значение приобретает наличие сортов, хорошо приспособленных к условиям среды и отличающиеся высокой утилизационной способностью: а именно способностью эффективно использовать имеющиеся в почве питательные элементы и влагу.

С целью поиска таковых в НКР с 2003г. проводится испытание сортов озимой пшеницы армянской селекции. Выделено несколько перспективных сортов, которые в мелкозеляночных условиях имели более продуктивный колос (по массе колоса, количеству зерен в колосе и массе зерен одного колоса), чем стандартный сорт Безостая 1. Особенно выгодно отличались сорта Арпах, Амарас, Варанда, Шуши и другие.

Часть из них имела такие же хорошие показатели и в предыдущем 2003 году.

Эти показатели колоса хорошо коррелируют с урожайностью и дают некоторое представление об урожайных возможностях этих сортов.

Գրականություն

1. Гулян А.А., Григорян А.А., Сафарян Г.Е., Хлгатын А.Х., Об эффективности отбора пшеницы по массе колоса, Биолог, ж. Армения, т-42, '7, Ереван, 1989.
2. Գուլյան Ա.Ա., Աշխնագան փափուկ ցորենի սելեկցիայում փորձարարական մոտիվացնեցի օգտագործման արդյունավետությունը, Դոկտորական ատենախոսություն, Երևան, 1999:
3. Гулян А.А., Некоторые аспекты улучшения генплазмы озимой мягкой пшеницы в Армении, Тезисы докл. VII международной кавказской конференции по зерновым и зернобобовым культурам, Тбидиси, 2004.
4. Доспехов Б.А., Методика полевого опыта, М. 1979.

2006թ. № 1(12)

Բովանդակություն

+1.	Ծայրային պայմանում սպեկտրալ պարամետր պարունակող մի ծայրային խնդրի սպեկտրի մասին <i>Ս.Կ. Պետրոսյան</i>	3	+
+2.	О решениях одной периодической краевой задачи <i>Г.Г. Саакян</i>	5	+
+3.	Тернарные сверхтождества ассоциативности определенные по равенству $((x, y, z), u, v) = (x, (y, z, u), v)$ <i>Л.Р. Абрамян</i>	7	+
+4.	Вариации функции распределения частиц по размерам в смоговой ситуации <i>Г.М. Багунц</i>	9	+
+5.	Основные задачи и особенности преподавания начертательной геометрии и черчения в вузе <i>А.А. Погосян</i>	13	+
+6.	Կրժողների էկոլոգիայի դաշտային հետազոտման որոշ մեթոդներ <i>Վ.Տ. Տարապետյան</i>	16	+
+7.	Սովորական նշտարիկի կենսականը և կազմությունը <i>Ս.Բ. Աղապյան, Ս.Ա. Աղապյան</i>	20	+
+8.	Վազի արմատային համակարգի տարածումը հողում և տնրևային մակերևսի աճը կախված խոնավությունից <i>Ա.Ն. Հակոբյան</i>	26	+
+9.	Эпидемиология и профилактика гельментозов среди организованных детей г.Степанакерта <i>З.Я. Асриян, А.А. Магакелян</i>	29	+
+10.	Արցախի եղերայուղատու բույսերը և նրանց օգտագործման հեռանկարները <i>Ա. է. Ավետիսյան, Մ. Կ. Հովհաննիսյան</i>	32	+
+11.	Ներքաղաքական հավաստությունների սրումը ԼՂՀ-ում (1993թ. փետրվար-մարտ ամիսներին) <i>Տ.Վ. Հակոբյան</i>	34	+
+12.	Палеолитические памятники Карабаха в освещении Азербайджанской историографии <i>В.А. Сафарян</i>	40	+
+13.	Յածր կենսարկի և մեկնարկային թափի տեխնիկայի ուսուցման մեթոդական ուսումնասիրումը (հետազոտումը) վնցերթը դատարանի տղաների և աղջիկների մոտ <i>Մ.Վ. Բաղդասարյան</i>	45	+
+14.	Уровень работоспособности студентов АргУ и освоенность ИПФП в процессе физического воспитания <i>С.С. Погосян</i>	52	+
+15.	Проблемы изучения и формирования творческого воображения подростков с учетом их индивидуально-возрастных особенностей <i>А.М. Мхитарян</i>	54	+

2006 1/12

16.	Самоубийство подростков: социальные причины и последствия <i>Ж.А. Саркисян</i>	59
17.	Անտիկ փիլիսոփա Պլատոնի հայացքները հոգու բացատրության շուրջ <i>Մ.Ե. Մելիքսեֆյան</i>	66
18.	Հայ լեզվաբանության անհատականի բարձրանքը (Հրաչյա Աճառյանի ծննդյան 130-ամյակի առթիվ) <i>Ա.Յու. Մարգարյան</i>	69
19.	Բազմի միսիոներական ընկերությունը և նրա լեզվակրթական գործունեությունը Շուշիում <i>Օ.Ե. Բաբայան, Ա.Է. Հայրապետյան</i>	76
20.	Նարեկագու անվան և նրան առնչվող բառերի կիրառություններ չափաժողովում <i>Ս. Ա. Մինասյան</i>	81
21.	Лексикографические основы создания русско-армянско-английского толкового словаря фразеологических единиц библейского и мифологического происхождения <i>Э.А. Айрапетян</i>	85
22.	Типология существительных английского языка <i>С.Н. Огольцов</i>	88
23.	История изучения фразеологии в русской лингвистической традиции <i>А.Петросян</i>	94
24.	70-ամյան թթ. հայ բանաստեղծության մի քանի առանձնահատկությունները: <i>Հ.Գ. Մուսայելյան</i>	100
25.	Պարույր Սևակի «Նվ այր մի Մաշտոց անուն» պոեմի ուսուցումը <i>Ս.Ե. Խաչատրյան</i>	104
26.	Սերգեյ Մարիյանի քննահամակարգը <i>Զ.Վ. Բադայան</i>	106
27.	«Էկոլոկովչինան» Վազգեն Օվյանի պոեզիայում <i>Լ. Ս. Գրիգորյան</i>	112
28.	Հայաստանի և Արցախի տնտեսական անվտանգության ապահովման նախապայմանները <i>Թ. Մանասեթյան</i>	115
29.	Շահութահարկի դրույքաչափի օպտիմալացման անհրաժեշտությունը ԼՂՀ-ում <i>Կ. Ա. Ներսիսյան</i>	122
30.	Գնուծի նպատակադրումը և արժույթային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում <i>Գ. Հ. Գրիգորյան</i>	127
31.	Տնտեսական աճի՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի էության մասին <i>Օ. Նասյան, Ռ. Նասյան</i>	131
32.	Աշնանացան ցորենի հայկական սելեկցիայի աղբյուրի գնահատման նախնական արդյունքները <i>Ա. Գուլյան, Կ. Աղամյան, Ն. Մելքոնյան</i>	136

Արցախի պետական համալսարան

Գիտական տեղեկագիր

1 (12)

2006

Ученые записки

Համակարգչային շարվածքը և խմբագրումը՝
Արցախի պետհամալսարանի հրատարակչություն

Արցախի պետհամալսարանի հրատարակչություն
Ստեփանակերտ, Մ . Գոշի փ. 5
Издательство Арцахского госуниверситета
Степанакерт, ул. М. Гоша, 5

ԿԱՆՈՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. «ԱրԴՀ գիտական փնդակագիր» պարբերականում հրապարակվում են օրիգինալ հոդվածներ ու նամակներ տեսական և էքսպերիմենտալ բնույթի մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի, էկոլոգիայի, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներին:

2. Ընդունվում են նաև ԱրԴՀ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, գիտաժողովների և գիտական դպրոցների նյութեր:

3. Բնագրերը ներկայացվում են երկու օրինակով, մեքենագրված, երկու ինքնուրույն մեկ, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփումներով: ՀՏԴ-ից (վերևի ձախ անկյունում), հոդվածի վերնագրից և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անուրացիա: Հոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջ, հաղորդմանը՝ 4, նամակինը՝ 2:

4. Հոդվածի հետ ներկայացվում է արձանագրության քաղվածքը այն ամբիոնից, որտեղ կադրավել է քննարկվել է աշխարհում:

5. Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (հստակ լուսանկար կամ գծագիր՝ արված առանձին սպիտակ թղթի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է կարգային համարը: Տեսքերի լուսանցքներում նշվում է նկարների և աղյուսակների փնդկերը:

6. Միեւնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:

7. Բերվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը, քառանկյունի փակագծերում ((1.3-5))՝ ըստ հանդիպման հերթականության: Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը, զրքի կամ հոդվածի վերնագիրը: Պարբերական հրապարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումը առանց չափերների, թվականը, հապորի ու թողարկման համարները, հերթական համարը և էջը: Գրքի դեպքում հրապարակման վայրը, հրապարակչությունը, թվականը և էջը: Չհրապարակված աշխատանքի վերաբերյալ (ըստի պետքի խոստովանելու) գրականության մեջ նշել չի թույլատրվում: Արտատպման գրականությունը տեսքով նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ օրիգինալով:

8. Հոդվածի տեսքերի վերջում ձախ կողմում նշվում է այն ամբիոնը կամ լաբորատորիան, որտեղ կադրավել է աշխատանքը:

9. Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале „Ученые записки“, АрГУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиотехники, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.

2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АрГУ.

3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через два интервала на русском, армянском или английском языках, с армянским, русским или английским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе с таблицами не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.

4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.

5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертежи, выполненные черной тушью на белой бумаге). На оборотной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.

6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.

7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках [1,2-5]. В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе- на языке оригинала.

8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.

9. Статья подписывается всеми авторами.